№ 33 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13 № 33

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՑ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակները և ծրարները ուղարկելիս, պէտք է դիտել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907թ.

„ՄՈՒՐՃ"

Գրական, հասարակական և քաղաքական

ԱՄՍԱԳԻՐ

(Նոր երկրորդ VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., ամսական 90 կ. Արտասահմանի համար՝ տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.), ամսական 3 ֆ

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ր.). երկրորդ վճարը լինում մայիսին։ Տարբ. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանուորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 ռուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ր.)։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 12) և «Գուտենբերգ» գրախան. (Երևան. հրապ.) և «Новая Рѣчь» գրախան. (Գօլովինսկի պրոսպ. թատր. դիմաց)։

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ».

Արտասահմանից՝ Tiflis, Rèdactio de la revue «MURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամեն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բռնող յայտարարութեան համար 10 ր., 1/2 եր. 5 ր., 1/4 եր. 2 ր., տողատեղ (կօրպուս) 40 կ.։

7—0 Խմբագիր՝ Լեոն Սարգսեան

ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Երեքշաբթի, փետրվարի 12-ին

Հայ Դրամատիկ ընկերութեան խումբը
Անդամների, փոխանդամների և նրանց ընտանիքների համար
կը ներկայացնէ

ՀԷՔԵԱԹ

Դրամա 3 արար. Շեկսպիրի, թարգ. Վ. Տիրացեանի

Սկիզբը ժամը 8½-ին է

Տեղերի գները 1 ռուբլուց մինչև 30 կոպէկ։ Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են ամեն մի տոմսակին 1 ռուբլի կս։

Բեժխասեր Ց. Աբելեան

(Ե.) ա 1—1

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հիւ. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, չորրորդշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՏՕՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. ինգ. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիվանդով ամենայն 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՔԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ԲՕՋՄԱՒԻՍԿԻ.—Երեխ., երկ., չորրորդ 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԵՌՈՒԾՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., ինգ., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ԳԻՎԱՐՍԿԻ
Բժ. Ն. Ի. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } կլինիքական անալիզ

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գեն. մասաժ, ելեքտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՈՒԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ՆԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ Գ, ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ., հինգշ. շաբ. 4—5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել սանուցեալի և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 66—144

ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

I

Թիֆլիսում բացվեց մի յատուկ ընկերութիւն, որի նպատակը պէտք է լինի հիմնել և կազմակերպել ժողովրդական համալսարաններ։

Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովում, որ տեղի ունեցաւ կիրակի օր, փետրվարի 11-ին, ընտրվեց տասնհինգ հոգուց բաղկացած մի վարչութիւն, որը պէտք է դիմէ անմիջական գործունէութեան։

Ժողովրդական համալսարան կոչված հաստատութիւնները ներկայումս կարևոր դեր են կատարում արևմտեան Եւրօպայի երկիրներում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և ուրիշ պետութիւններում։

Նրանք մատակարարելով օգտաւէտ գիտելիքներ հասարակ ժողովրդին, բարձրացնում են նրա մտաւոր մակերևոյթը, տալիս են հնարաւորութիւն լրացնելու այն, ինչ որ չէ կարողացել տալ դպրոցը և այդպիսով տալիս են նրա ձեռքը կուլտուրական այն կարևոր զէնքը, որից նա զրկված է մնացել։

Ժողովրդական համալսարանի գաղափարը արդէն մի քանի տարի է, որ սկսել է մարմնանալ Ռուսաստանի զանազան տեղերում և այժմ նա ստանում է որոշ կազմակերպութիւն։ Բացված ընկերութիւնը նպատակ ունի հիմք դնել այդպիսի համալսարանների Թիֆլիսում և նպաստել նրանց տարածմանը, թէ Թիֆլիսի նահանգում և թէ ամբողջ Անդրկովկասում։

II

Ժողովրդական համալսարան հիմնողների առաջ նրանց գործունէութեան հէնց սկզբնական քայլերից հանդէս է գալիս լեզուի հարցը։

Ի՞նչ լեզուով պէտք է սովորեցնել և դասախօսել։

Անշուշտ այն լեզուով, որ հասկանալի է հասարակ ժողովրդին։

Այս տեղից ըղխում է և տեղական լեզուներով դասախօսութիւններ կամ դասեր կազմակերպելու անհրաժեշտութիւնը։

Եւ անկասկած, նոր բացված ընկերութիւնը անմիջապէս պէտք է կազմակերպէ սեկցիաներ կամ մասնաժողովներ այս ու այն լեզուով կատարվելիք դասընթացքների համար։

Թէ Թիֆլիսում և թէ մեր երկրի զանազան տեղերում զգալի կերպով նկատվում է հասարակ ժողովրդի կողմից պահանջ սովորելու և իւրացնելու այն, ինչ որ անհրաժեշտ է իւրաքանչիւր քաղաքացու համար, բայց որը նա չէ կարողացել ձեռք բերել իր կեանքի հանգամանքների շնորհիւ։

Եւ եթէ կազմակերպողներն ու պահանջ ունեցողները կարողանան փոխադարձ օյժերով և աջակցութեամբ կազմակերպել ժողովրդական համալսարաններ մեր երկրում, նրանք կը նպաստեն մի շատ օգտաւէտ գործի իրականացմանը։

III

Մենք ասացինք, որ իրանք պահանջ ունեցողները նոյնպէս պէտք է աջակցեն այդ գործին։

Այո, դա շատ կարևոր է և գործի աջողութեան համար ունի էական նշանակութիւն։ Երբ որ բանուորները, արհեստաւորները, գործատարները կը կազմակերպեն ունկընդիրների խմբեր, այն ժամանակ ընկերութեան համար դիւրացված կը լինի գործունէութիւնը մի զգալի չափով, այն ժամանակ նա իրան կը նուիրէ դասախօսութիւնների լաւագոյն և աջող կազմակերպութեան։

Շատ կարևոր է, որ մեր ժողովրդական խաւերը լուրջ կերպով հետաքրքրվեին ժողովրդական համալսարանի իրագործութեան գաղափարով և նպաստէին օգտաւէտ դիտելիքների տարածմանը, որոնց պակասութիւնը և բացակայութիւնը այնքան զգալի է մեր ժողովրդի մէջ։

Մենք դպրոցներից զրկված ենք եղել, իսկ եղածներն էլ չեն տուել այն բոլորը, ինչ որ պարտաւոր էին տալ սովորողին։ Պէտք է օգտվել ամեն մի հնարաւորութիւնից փոխարինելու դպրոցը, ընդարձակելու նրան և ժողովրդի մէջ ցրվելու գիտութեան և լոյսի ճառագայթները։

Ժողովրդական համալսարանը այդպիսի միջոցներից մէկն է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Երէկ, փետրվարի 12-ին, խմբագրութիւնս ստացաւ հետեւեալ հեռագիրը Բօստօվից (Դոնի վրա)։

«Այստեղ վախճանվեց վաճառական Սարգիս Թրջեանը, որը Սուրբ-Խաչի գիւղատնտեսական դպրոցի համար կտակել է 100,000 ռուբլի։

«Երէկ քաղաքագլխի նախագահութեամբ կայացաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց 16 հոգուց բաղկացած մի մասնաժողով՝ հայ-թուրքական ընդհարումներից վնասված արկածեալների օգնին ժողովարարութիւն անելու համար։

Հ. Առաքելեան

Պետերբուրգ, 11 փետրվարի։ Ներքին գործերի մինիստրը չէ թոյլատրեց, որ սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը իր հանրակցութենական համագումարը կայացնէ Պետերբուրգում, որով սահմանադիր-ռամկավարների կուսակցութեան կենտրոնական կօմիտէտը, անյարմար գտնելով ներկայումս համագումարը կայացնել Ֆինլանդիայում, որոշեց համագումարը յետաձգել։

—

Գանձակ, փետրվարի 10-ին

Իշխանութիւնից թոյլատրութիւն է ստացված փոխադարձ վարկի բաժանմունք բանալ հայոց մասում։

Այդ լուրը մեծ ուրախութիւն պատճառեց տեղական առևտրականներին։

Աւ. Սահակեան

—

Գանձակ, փետրվարի 10-ին

Այսօր վատահելի աղբիւրից իմացայ, որ Ասկարանից ցած սպանված փոխ-գնդապետ Զօլոտարեովի սպանութեան պատճառով վարվանից եկեղեցուցիա կը դնվի դէպքի վայրին կից շրջակայ 13 թուրք և 5 հայ գիւղերի վրա։

—

Խանքենդ-աւան, 6 փետրվարի

Փոխ-գնդապետ Զօլատարեովի սպանութիւնը յուզել է ամբողջ ադմինիստրացիային և զօրքին։ Ամսի 5-ին, այստեղ եկաւ գաւառապետը և մի խումբ սատնիկներ, ու գնացին Ղարա-Աղաջ եղեռնագործութեան տեղը։ Այս գիշեր գնաց դարձեալ մի հարիւրեակ զօրակ հեծելազօր։ Թիստ միջոցներ են ձեռք առնված յանցաւորներին գտնելու։ Այս երեկոյ եկան և գեներալ-նահանգապետ Բաուէր։ Շեղլուից բռնված ու բերված են դարձեալ երկու թուրք։ Ասում են, որ Շեղլուում կօզակների ձեռքով աւերված են մի քանի տուն։ Այստեղ, Խանքենդում են երկու կառապանները, որոնց մէկի կառքի մէջ սպանվել է տարժնիկը, իսկ միւսնի՝ Զօլատարեովը։ Կառապանները հրաժարվում են եղեռնագործների անունները տալուց, առարկելով, որ կըսպանվեն, միայն պատմում են, որ թուրքեր էին և ոչ հայեր։ Հանգամանքն այսպէս է։ Խանքենդու Սունժինսկիյ հեծելազօր կօզակ գնդի օֆիցէրները միաձայն հաւանութեամբ ընտրում են իրանց միջից փոխ-գնդապետ Զօլատարեովին, որ գնայ Երևան և մասնակցէ այնտեղի կօզակ օֆիցէրների նիստերին Սունժինսկիյ օֆիցէրների կողմից։ Այդ ժամանակ Զօլատարեովը գտնվում էր Զեբրայիլում։ Հեռագրով նրան յանձնարարվում է, որ փետրվարի 5-ին անպատճառ լինի Երևանում, մասնակցելու նիստերին։ Ամսի 2-ին Զօլատարեովը Զեբրայիլից ճանապարհվում է, սակայն մինչ նում հասնել Աղդամ և գիշերում է Փիրբուլաղ կայարանում։ Գիշերը, քնած ժամանակ, նրա գրպանից հանում են 80 ռուբլի։ Առաւօտեան տեսնելով այդ բանը, նա պահանջում է կայարանի թուրքերից իր 80 ռուբլին։ Թուրքերը բացատրում են, որ խաբարութիւն չունեն։ Զօլատարեովը սպառնում է նրանց, ասելով, եթէ կիրակի օրը, ամսի 4-ին իմ 80 ռուբլիս առաւօտեան չը բերէք Աղդամ և ինձ չը տաք, ես տակն ու վրա կանեմ ձեր կայարանը։ Նա ապա գալիս է Աղդամ, այդտեղից փոխանակ Երևան գնալու համար, գալիս է Խանքենդի, փող վերցնելու։ Խանքենդի հասնելով ստանում է 75 ռուբլի, ու իսկոյն վերադառնում է Խօջալու, գիշերում է, որ առաւօտեան շուտով ճանապարհվի Աղդամ։ Առաւօտեան, ամսի 4-ին, ճանապարհվում է Աղդամ։ Հասնելով Ղարա-Աղաջ տեղը, նրա առաջ կարում են մի քանի զինված մարդիկ և հրամայում են կանգնել։ Զօլատարեովը ուշադրութիւն չէ դարձնում ու հրամայում է կառապանին շարունակել ճանապարհը, բայց այն մարդիկը աւելի մօտենալով աջ և ձախ կողմերից հրամայում են կանգնել, բայց Զօլատարեով հանելով ատրճանակը կրակում է նրանց վրա։ Երկու անգամ կրակում է, բայց աւազակները մի զարկով նրան ժանցու վէրք են հասցնում։ Զօլատարեովը ընկնում է կառքից և ճանապարհի մէջում աւանդում է հոգին։ Աւազակները մօտենում են, պտրտում են գրպանները, ցրիւ տալիս բոլոր թղթերը, և տանում միայն Խանքենդից ստացած 75 ռուբլին։ Աւազակները սպանութիւնը կատարելուց ու կողոպտելուց յետոյ, հեռանում են դէպի Շեղլու գիւղը։ Լուրը հասնում է Խօջալու, իսկոյն եղեռնագործութեան տեղն են հասնում սարժնիկները, և աւազակների հետքերով հետևում են նրանց դէպի Շեղլու գիւղը։

Ամսի 3-ին չարագործները դարան են մտնում Քայ-բաղչի մօտի խճուղու հիւսիսային երեսին գտնվող քարվանսարայում, յարձակվում են Ադդամից վերադարձող կառքի վրա, սպանում նստող ռուս սարժնիկին, տանում հրացանը։ Նոյն գիշերը այդ չարագործները յարձակվում են Ղէչէջաղ գիւղի ձմերանոցի վրա, մի կողմից հանում են 3 անասուն, ապա մտնում մի տուն, սարսափի տակ լռեցնում տանտիրոջ, ու հանաքում եղած իրերը և 160 ռուբլի փող ու աներևոյթանում։ Հարայը ընկնելով ձմերանոցը, հայերը հետամուտ են լինում գողերին, գտնում են հետքը և անասունները յետ խլում։ Այնուհետև աւազակները դարան են մտնում Ղարա-Աղաջ անուանեալ տեղում և պատահելով Զօլատարեովին՝ սպանում են։ Նահանգապետը և քննիչը պահանջեցին և ղէչէջաղցիներին հանգամանքներն իմանալու և թէ արդեօք ճանաչում են չարագործներին, թէ ոչ։

***

—

Խանքենդ-աւան, 7 փետրվարի

Չը նայելով որ Շուշի-Եւլախ խճուղի ճանապարհում կանգնեցրված է զօրք, ճանապարհորդներին հանգստութիւն շընորհելու պատճառաւ, այնուամենայնիւ այդ ճանապարհը դարձել է անտանելի. ճանապարհորդը Շուշուց մինչև Եւլախ և Եւլախից մինչև Շուշի գտնվում է ամենավերջին ծայր լարման և կրիտիքական վիճակում, թէ իրան հետ արդեօք ինչ դժբաղդութիւն կը պատահի։ Սրանից առաջ Եւլախի և Բարդայի շրջանում կողոպտել են հանրակառքերի ճանապարհորդներին. ամսի 3-ին սպանեցին ռուս սարժնիկին և 4-ին փոխ-գնդապետ Զօլատարեովին և այդ ծանր սարսափ է բերել բնակիչների վրա. ոչ ոք չէ վատահանում այդ տրակտով գնալու։ Այժմ ժամ է վերջապէս մտածել Շուշի-Գանձակ ճանապարհը աւարտելու։ Գործ շատ քիչ է մնացել, ընդամենը մի 30—40 վերստ և Շուշի-Խանքենդին կը կապվի Գարձակի հետ։ Այդ ճանապարհը խաղաղ կը լինի ճանապարհորդների համար. այդ դեռ մի կողմը Թողած Խաչէնը կը կապվի Զրաբերդի, Ղարաչինարի հետ և հաց կը մատակարարեն, իսկ հայ այրատանները և փուրգոնչիները, որոնք այսօր դժուարանում են գնալ Եւլախ, այդտեղով խաղաղ կերթան Գանձակ ապրանք տեղափոխելու։ Նրանց վրա, եթէ պարտք կայ աշխատանք գործադրելու և ճանապարհը շինելու իրաւունք ձեռք բերելու, պիտի աշխատեն այդ իրաւունքը ձեռք բերել, որ առաջիկայ մարտ ամսից գիւղացին կարողանայ աւարտել իր շինած և կիսատ թողած գործը։ Խանքենդուց մինչև Գանձակ գիւղացիները 50 հազար ռուբլու աշխատանք են գործադրել, մինչ արդարև այդ խոշոր աշխատանքը պիտի թողնել, որ ապարդիւն անցնի։ Շուշի-Գանձակ ճանապարհը մեծամեծ գործերի և առևտրի լայն շրջաններ պիտի բանայ։

***

—

Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովի անցեալ նիստին, ի միջի այլոց որոշվեց—ի նկատ առնելով, որ հասարակական մասնակի նուիրատուութիւններով անկարելի է բուժել հայ-թուրքական ընդհարումներից առաջացած խորը և մեծ վէրքը, սերմացու և այլ անհրաժեշտ օգնութիւն հասնելու առաւելագոյներին և այդպիսով վերականգնելու մինչև վերջին թելը քայքայված շինական տնտեսութիւնը,—թուրք ընտրեալ ներկայացուցիչների հետ միացեալ դիմումն անել բարձր իշխանութեան և փոխատուութիւն խնդրել երկու ֆռանկ ազգաբնակութեան համար։ Այդ իսկ նպատակով Ցանձնաժողովը ընտրեց պ. պ. Ա. Քալանթարին, բժ. Ստեփանեանին և Ս. Զաւարեանին, որոնց յանձնարարեց ներկայանալ Շէյխ-ուլ-իսլամին և ստանալ թուրքերի համաձայնութիւնը՝ միացեալ դիմումն անելու նպատակով։

Երկուստեք խորհրդակցելուց յետոյ, Գարեգին արքեպիսկոպոսի և Շէյխ-ուլ-իսլամի ստորագրութեամբ, Բագու, Երևան, Գանձակ ուղարկվեց մի հեռագիր այս բովանդակութեամբ.

«Մեծ և ուժեղ կարիք և քաղց ունենալով Գանձակի նահանգի շատ գաւառներում, ինչպէս և անհնար է հանդիսանում մասնաւոր նուէրներով բաւարարութիւն տալ կարիքի նոյնիսկ անշնչամասի, Նպաստամատոյց Ցանձնաժողովի նախագահ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանը, Շէյխ-ուլ-իսլամ Ախունդ Զադէի հետ միասին, խորհրդակցելով մի քանի աշխարհիկ ներկայացուցիչների հետ, խնդրում են երկու ազգութիւնների բարեգործական ընկերութիւնների ներկայացուցիչներին խորհրդակցել և նահանգական իշխանութեանը պարզել կարիքի չափը և Թիֆլիս պատգամաւորներ ուղարկել միասնաբար միջնորդութիւն յարուցելու Փոխարքայի առաջ կառավարական օգնութեան անհրաժեշտութեան մասին»։ Շէյխ-ուլ-իսլամ Ախունդ Զադէ, Գարեգին արքեպիսկոպոս։

Այս հեռագրին Հ. Զ. Ա. Թաղիեվը փետրվարի 7-ին ուղարկել է հետևեալ պատասխանը։

«Թիֆլիս, Շէյխ-ուլ-իսլամին և Գարեգին արքեպիսկոպոսին։ Ձեր ուղարկած հեռագիրը քննելով՝ մահմեդականների ներկայացուցիչները, միանգամայն հաւակրելով յարուցած հարցին, պարզեցին, որ այդ հարցը արդէն քննվել է հայկական ներկայացուցիչների նախաձեռնութեամբ հայ-թուրքական միացեալ մասնաժողովում։ Մահմեդական ներկայացուցիչներից մէկը առաջարկել է նպաստ խնդրելու հարցի հետ զուգընթացաբար միջնորդութիւն յարուցել, որ կառավարութիւնը ապահովէ դէպի լեռները տանող քոչի ճանապարհները, սակայն հայ ներկայացուցիչները դրականապէս հրաժարվել են միանալ այդպիսի միջնորդութեան, պատճառաբանելով, որ նրանք քոչի հարցը քննելու նկատմամբ լիազօրված չեն։ Մինչդեռ Գանձակի նահանգի մահմեդականների համար քոչի և նրա հետ կապված, ձիաները տանող ճանապարհները իր ժամանակին ապահով դարձնելու հարցը վերին ստիճանի էական է և նրա լուծումից է կախված Գանձակի նահանգի մահմեդականների ամբողջ բախտը։ Ամեն տեսակ միլիոններ չեն վարձատրի այն անհամար կորուստները գոյքով, անասունով և կեանքով, որոնք կրում են այդ բայսնի մահմեդականները, եթէ նրանց այս տարի էլ չապահովվեն քոչի ճանապարհները։ Գանձակի նահանգի մահմեդականների միջոցները դժուար է հաշուի առնել, սակայն անսխալ կարելի է ասել միայն այն, որ նրանք տաս անգամ աւելի են միասվել, քան հայերը։ Ուստի մահմեդականների ներկայացուցիչները միաձայն վճռեցին յայտնել ձեզ, որ եթէ հայերը չը համաձայնվեն մահմեդականների՝ քոչի մասին մահմեդականների յարուցած միջնորդութեանը, մահմեդականները, իրանց հերթին, ստիպված կը լինեն հրաժարվել ընդհանուր միջնորդութիւնից նպաստի մասին և կը լարեն իրանց բոլոր ջանքերը, որպէսզի այսպէս կամ այնպէս, կառավարական և իրանց նպաստներով ապահովվել քոչ տանող ճանապարհները։ Գանձակի նահանգի քաղաքացիների օգտին նպաստներ ժողովող կենտր. մասնաժողովի նախագահ խնդրական պետական խորհրդական Թաղիեվ»։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

—

ՄՈՍԿՎԱ, 11 փետրվարի։ Բանուորները, ի պատասխան սահմանադիր-ռամկավարների ընդունած վճռի՝ ոչ մի տեղ Դումայում Մոսկվայի կողմից, մի բանձև են կազմում, յայտնելով, որ սահմ.-ռամկավարնե-

ը չեն հանդիսանում Մոսկվայի ազգաբնակութեան ներկայացուցիչներ։

Այդ քանակը ուղարկվելու է Պետական Դումային։

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Կոստրոմայի նահանգի կողմից—Դարուսով, առաջադիմական, գիւղացի. Պերէլէշին, ազգութեան պարագլուխ. Իւնիցկի, ուսուցիչ, երկուսն էլ կադէտներ. Պետերսոն, Վիտլուժսկի զէմստվային վարչութեան նախագահ, սոցիալ-դեմոկրատ։ Այդպիսով ընտրվել են 419 պատգամաւորներ, որոնցից 258-ը ձախակողմեաններ են, 25-ը առաջադիմականներ, 70-ը՝ սահմանադիր-ռամկավարներ, 41-ը սոցիալ-դեմոկրատներ։

Պոլտավայի նահանգի կողմից—Շկլիարովիչ, Պաւլով, դատարանի անդամ, Լուկաշեվիչ, Միրոշնիչենկով, Մուլիմենկով, Բիւլիւբաշ, Զերենկո, բոլոր 7-ն էլ աջակողմեաններ են. Մայկո, սահմանադիր-ռամկավար, կոլակ. սեպտաւ Կոբոլենկոն։

Տամբովի նահանգի կողմից—Օգնեվ, Բոմանով, Վ.որոժէրկին, Լիսպատով, բոլոր 4-ն էլ գիւղացիներ են, սոցիալ-դեմոկրատներ. Բատաշեվ, սոցիալ-յեղափոխական. Պոլովենկին, շրջանային տանուտէր, ուս ժողովրդի միութեան անդամ. Դաւիդով, անկուսակցական, գիւղացի. Պրասով, առևտրական, անկուսակցական. Օսիչկին, առևտրական, Դոլգով, Նոսով, սահմանադիր-ռամկավար։

Տաշկենտի կողմից ընտրվել է Արդուլ-Վախիդ-Կարիբ-Դուլբուզի-Կարիեվ, անկուսակցական, շարիաթի նախնամախնդիր, չափաւոր։

ՍՈՎՐ ԶԻՒԱՆՆԵՐԻ, ԽԱՋԵՆԻ ԵՒ ԹՈՒՐԹԱՌԻ ԶՈՐԱԿՆԵՐՈՒՄ

Առաջաւոր կամ Դովշանլու, 6 փետրվարի։—Սով է... կատարեալ սով է յիշեալ լեռնային հովիտներում։ Սովից մարդային զոհերի երևան գալը անխուսափելի է։ Նպաստամատոյց Ցանձնաժողովի կամ Բարեգործական Ընկերութեան և Կուլտուրական Միութեան մարդկերանց՝ ադքատներին խոստացած հացի նպաստը (ալիւրով, ցորենով) ոչ նշանակված ժամանակին և ոչ մինչև այսօր չը ստացվեց։ Նրանք եկան գիւղերը, ցուցակագրեցին չքաւորներին և խոստացան շուտ հացի նպաստ հասցնել նրանց ու ժամանակ նշանակեցին դրա համար, սակայն մինչև օրս ոչ մի բան չը կայ։ Ուստի հրաւիրում ենք շուտափոյթ ուշադրութիւնը վերոյիշեալ երկու հասցառութիւններին։ Խնդրում ենք միջնորդել նպաստը շուտ հացնելու համար։

Խաչէի Ձորակի՝ Առաջաձոր և այլ գիւղերի ազգաբնները՝ իրիկնները դուներն են ընկնում և հաց ժողովում, ասելով ի միջի այլոց, արտասուալից աչքերով հետևեալ ֆրազան. «Ը.ը խեքը սովածութիւնից ձեռքից գնացին, հաց տուէք...»

Մինոյն ձորակի Վանք գիւղում (Առաջաձորից հեռու 7 վերստ), օրերս պատահել է հետևեալ դէպքը։ յիշեալ գիւղացու Մէյիրանց Քիւքիի երեխաները, երբ քաղցած դրութեան մէջ հօրից հաց են պահանջում, հայրը տեսնելով, որ ոչ մի հաց չը կայ հաց ճարելու և միջոց չունի հաց ձեռք բերելու.—իր մեռնելը լաւ է համարում, քան իր աչքի առաջ ունենալը՝ իր սովից տանջվող երեխաներին, ուստի մտնում է տուն և կրակը լաւ վառելուց յետոյ, ընկնում է կրակի մէջը, որ այդպիսով այրվի, փչանայ ու իր կեանքին վերջ տալով, չը տեսնէ իր որդիներացը սովի տագնապի ճիրաններում։ Սակայն հարևանները շուտ վրա են հասնում ու ազատում կիսամեռ Քիւքիին կրակից։ Քիւքին այժմ սաստիկ հիւանդ է։

Եւ ուրեմն, թախանձագին խնդրում ենք սովեալների համար շուտափոյթ օգնութիւն, օգնութիւն, օգնութիւն...

Անհամբեր սպասում ենք...

Բ. Զ.

Մ. ԱՃԵՄԵԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Բոստով, 7 փետրվարի

Ինչպէս հեռագրեցի արդէն, երէկ, փետրվարի 6-ին, Պետական Դումայի անդամ ընտրվից Բոստով և Նախիջևան քաղաքների կողմից մի հայ երիտասարդ, երդուեալ հաւատարմատարի օգնական, Մովսէս Աճէմեանը։

Պետական Դումայի այս նոր անդամի անունը մեզ կոլա-ցի հայերիս համար բոլորովին անծանօթ է. բայց դա չէ նշանակում, որ նա անյայտ անձնաւորութիւն է և այն հանգամանքը, որ Բոստովի պէս մի կօսմօպոլիտ քաղաքում 28 տարեկան մի երիտասարդ կարողանում է արժանանալ երկու մեծ և նշանաւոր քաղաքների կողմից Պետական Դումայի անդամ ընտրվել, ստանալով ոչ միայն այն կուսակցութեան քուէները, որին նա պատկանում է (կադետների), այլ և սոցիալ-դեմոկրատ պատուիրակների ձայները, ինքնըստինքեան ցոյց է տալիս, որ Մովսէս Աճէմեանը աչքի ընկնող յատկութիւններով է օժտված։

Ընտրողական ժողովը բաղկացած էր 81 պատուիրակներից, որոնք, ըստ քաղաքական համոզմունքների, դասաւորվում էին այսպէս. 1) մոնարխիստներ—5, 2) հոկտեմբերականներ—10, 3) կադետներ—43 և 4) սոցիալ-դեմոկրատներ—23։ Երէկ, քուէարկութեան ժամանակ Աճէմեանը ստացել է 54 ձայն, որովհետև նրան քուէ են տուել էսդեկներն ևս, որոնք թէև որոշել էին դնել էին իրանց սեփական կանդիդատին (Տիշչենկօին, որ ստացաւ քուէարկութեան ժամանակ 24 ձայն), պրոպագանդայի տեսակէտից, բայց գտնելով Աճէմեանին աւելի յարմար, նրան ևս ձայն են տուել։

Դեռ ընտրութիւնից մի օր առաջ, տեղական ուս լրագիրներից մէկի մէջ (Приазовскій Край) մի ուս հրապարակիս, Բօրոդդին, յանձնարարելով պատուիրակներին ընտրել ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամ Մ. Աճէմեանին, հետևեալ կերպով է խօսում նրա մասին. «Պերճախօս հռետոր, ժողովրդական ազատութեան աչքի ընկնող ներկայացուցիչներից մէնը, քաղաքական իդէալների համար մարանչողի ինքնաձին ընդունակութիւններով օժտված մի մարդ, որ միևնոյն ժամանակ քաղաքական կազմակերպիչ է, ըստ կրթութեան միաժամանակ բժիշկ և իրաւագէտ, լայն հմտութեամբ (երուդիցիայով ոչ միայն սոցիալական, փիլիսոփայական, պատմական, այլ և բնական գիտութիւնների մէջ.—Աճէմեանը բոլորովին համապատասխանում է այն լուրջ պահանջներին, որ կարելի է պահանջել մի իսկական ժողովրդական ներկայացուցչից»։

Իսկ այսօր տեղական ուս լրագիրները, տալով իրանց ընթերցողներին նորընտիր պատական գործչի լուսանկարը, որից ուղարկում եմ մի օրինակ, հետեւեալ կենսագրական տեղեկութիւններն են հաղորդում։

Մովսէս Աճէմեանը ծնվել է Նոր-Նախիջևանում) 1878 թ.ին։ Նա իր նախնական կրթութիւնը ստացել է այդտեղի հայոց թեմական դպրոցում, որտեղից մտել է Բոստովի գիմնազիան, իսկ այստեղից, տեղափոխվելով Լազարեան ճեմարանը, աւարտել է այդտեղ իր գիմնազիական կրթութիւնը։ 1897 թ. Մ. Աճէմեանը մտաւ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը։ Դա համալսարանական շարժումների ժամանակն էր. 1899 թ. պայթեց համառուսական համալսարանական գործադուլը։ Աճէմեանը արտաքսվեց համալսարանից այդ գործադուլին մասնակցելու համար. 1900 թ. նա նորից ընդունվեց։ Վերջին 3 տարին բժշկական ֆակուլտետի մէջ եղած ժամանակ նա կուրսային աւագ էր և իր ընկերների վրա նկատելի ազդեցութիւն ունէր։ 1901 և 1902 թ. անկարգութիւնների ժամանակ, նա աքսորվեց մայրաքաղաքից իր հայրենիքը։ 1903 թ. աշնան, նա ստացաւ բժշկի կոչումը։ Բայց Աճէմեանին գրաւում էր հասարակական գործունէութիւնը. նա որոշում է, իբրև էկստերն, իրաւագիտական ֆակուլտետի քննութիւն տալ։ Թոյլատրութիւն ստանալով, նա 1904 թ. քննութիւն է տալիս և ձեռք բերում առաջին աստիճանի դիպլոմ ըստ իրաւագիտական ֆակուլտետի։ Մոսկվայի նահանգական դատարանի նախագահը և Մոսկվայի համալսարանի պրիվատդոցենտը առաջարկեցին ֆակուլտետին պահել Աճէմեանին համալսարանում քրէական իրաւունքի և քրէական դատավարութեան ամբիոնի համարը 1904 թ. Աճէմեանը գրվեց երդուեալ հաւատարմատարի օգնական Մոսկվայում։ Նրա գիտական աշխատութիւններից պէտք է յիշատակել մի յօդուած «անգիտակցութեան մասին»։

Բոստովում Աճէմեանը ցոյց տուեց իրան երկրի քաղաքական նոր կեանքի սկզբում իբրև ժողովրդական ազատութեան կուսակցութեան եռանդուն անդամ, իբրև մասնակից նրա տեղական գործունէութեան առաջին ընտրութիւնների ժամանակ, իսկ այս տարի, իբրև մեծ էրուդիցիայով մի մարդ հասարակական խնդիրների շրջանում և հռետորական ակնարկ տալանդի տէր։

Այս տեղեկութիւնները և կարծիքները Մովսէս Աճէմեանի մասին ցոյց են տալիս, թէ ինչու նա արժանացաւ Պետական Դումայի անդամ ընտրվելու մեծ պատուին։ Ցանկանք թէ Բոստով-Նախիջևանի քաղաքացիների համար և թէ հայ ազգի պատուի համար, որ երիտասարդ Աճէմեանը արդարացնէ իր վրա դրված յոյսերը։

Երէկ, երբ ընտրութեան արդիւնքը յայտնվեց, մեծ փողոցի վրա խնված ժողովուրդը օվացիա սարքեց ի պատիւ նորընտիր պատգամաւորի և ուս քաղաքացու և հրեայ ու հայ վաճառականների ու գործակատարների հետ միասին, ծափահարում էր ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամ հայ Աճէմեանին, տալով դրանով ազգերի համերաշխութեան գաղափարի գաւականը՝ ընդհանուր իրաւունքներ և քաղաքական ազատութիւն ձեռք բերելու ասպարէզում։

Պէտք է այստեղ մերկացնենք մի տուութիւն, որ թոյլ է տուել իրան «ժամանակ» թերթը, տպելով, որ իբր թէ Բոստով-Նախիջևանում պատուիրակներ ընտրվել են նաև դաշնակցականներ։ Դա կատարեալ ինքնախաբէութիւն է։ Դաշնակցութեան վարկը, վերջին դէպքերից յետոյ, այնքան ընկած է Նոր-Նախիջևանի հայ հասարակութեան աչքում, որ նա իր քուէն աւելի շուտ ուս պատրիոտի կը տար, քան դաշնակցականի։ Ցաւմնայն դէպս, ինչպէս տեսանք, բոլոր 81 պատուիրակների մէջ, ոչ մի հատ դաշնակցական չը կայ։

—

Նպաստամատոյցի պատգամաւորութեան գործը փոքր ինչ դանդաղեց Նոր-Նախիջևանում, որ, ըստ տեղական պայմանների, պէտք էր կանխօրէն թոյլատրութիւն ձեռք բերել տեղական իշխանութիւնից ժողով անելու և հանգանակութիւն սկսելու։ Վերջապէս, այդ թոյլատրությունը ստացվեց և վաղը, փետրվարի 8-ին, Նոր-Նախիջևանի դումայի դահլիճում կը կայանայ ընդհանուր ժողով, որ կորոշէ հանգանակութեան քանակը և եղանակը։ Ցոյս կայ, որ Նոր-Նախիջևանը և Բոստովը միասին կը տան 15—20,000 ռուբլի։

—

Էջմիածնից Նոր-Նախիջևանում ստացված նամակները մեծ մտատանջութիւն են պատճառում այստեղ։ Այդ նամակները բացատրում են, որ 24 աշակերտներ և լսարանցիներ ստիպված են եղել հեռանալ ճեմարանից, իբրև բողոք այն բանի դէմ, որ և ուսուցչական խումբը, տեղի տալով դաշնակցականների պահանջին արձակել են երկու աշակերտ և երբ ընկերները պահանջել են վերաքանչել գործը, այդ չէ կատարվել։

Մեսրոպ վարդապետի համբաւը բաւական մեծ հարուած է ստացել այդ նամակներից։ Եւ, արդարև, եթէ ճիշդ են այդ տեղեկութիւնները, չէ կարելի չը ցաւել, օր Մեսրոպ վարդապետին և ուսուցչական խմբին, որ նրանք, փոքրոգութեամբ, տեղի են տուել ազօրէն միջամտութեան և սպառնալիքներին։

Հ. Առաքելեան

ՈՒՇԱԳՐԱՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

I

Ընտրութիւնները վերջացան արդէն, բայց նրանք տուեցին մի շարք բնորոշ փաստեր, որոնք մերկացրին մեր ամենաթոյլ կողմերը։ Թէ առաջին և թէ երկրորդ ընտրութիւնների ժամանակ շփվելով ու գործելով ուրիշ ազգութիւնների—վրացիների, ռուսների հետ միասին կողք կողքի, մենք ցոյց տուինք զարմանալի անտարբերութիւն, մի կողմից դէպի մեր քաղաքացիական իրաւունքներն ու պարտականութիւնները հասարակական խոշոր հարցերի նկատմամբ, իսկ միւս կողմից՝ քաղաքական մեծ տգիտութիւն և անպատրաստականութիւն։

Բաւական է մի յետադարձ հայեացք ձգել կատարված ընտրութիւնների վրա, համոզվելու համար, որ վերին աստիճանի անպատրաստ բեր մթնոլորտ է տիրում մեր հասարակական կեանքում։ Մի կողմից նկատվում է անհատական զօրեղ եռը, ասիական բռնակալութեան տենչանքը, իսկ միւս կողմից՝ նոյն ասիական տարկոդութիւնը, շուարել—գլուխ կորցնելը, մի տեղ տիրում է մեծ հետաքրքրութիւն անձնական, մասնաւոր հաշիւներում, մի այլ տեղ՝ քաղաքացիական անպարտաճանաչութիւն, անհետաքրքրութիւն հասարակական ընդհանուր խնդիրների վերաբերմամբ և խակութիւն իրաւունքի հասկացողութեան մէջ։

Գուցէ դրանք մեր դժբաղդ ճակատագրի հինաւուրց բեկորներն են, բայց ժամանակ է վերջապէս, որ այդ տխուր բեկորները, այդ մեր արտի մէջ մնված ախտերը խսպառ վերանան ու անհետանան։

Քաղաքական նոր հասկացողութիւնների և յեղափոխական գործելակերպի յեղեղուկ կոհակները զարնվում են մեզ էլ։ Նրանք պէտք է խուսին մեր մեղկ հանգստութիւնը և չեն կարող չը խայթել մեր անտարբերութիւնը։

Հասարակական լուսամիտ փիտակցութիւնը, վերջապէս, պէտք է հանդէս գայ և շրջանկատ լինի իրերի ներկայ դրութեանը։

Կեանքի մէջ յաղթանակում են նրանք, որոնք զօրեղ են ոչ միայն իրանց բարոյական արժանաւորութիւններով, այլ և իրանց գաղափարական պատրաստականութեամբ, իրաւունքի խորին գիտակցութեամբ, իրաւունքի ձգտումներով և բուռն յաջողութեամբ դէպի հասարակական ընդհանուր շահերը, որոնց անմիջական լուծումից կախված է և անհատի բարեկեցութիւնը։

Դրա համար հարկաւոր է համախմբվել ոչ թէ ժամանակի խնդիրների շուրջը, այլ ընհանուր լօզունգների. գրանից է կախված թէ հասարակութեան և թէ ազգութեան բարեկեցութիւնը, իբրև մի մարմնացած, անբաժան ամբողջութիւն։

II

Ինչքա՜ էին կատարվում Թիֆլիսում, Ալէքսանդրպօլում, Երևանում, Գանձակում, թէ՛ պիտի կսկծեցուցիչ փաստեր երևան հան ընտրութիւնների ժամանակ։

Մի կողմ թողնենք այն բռնութիւններն ու ապօրինութիւնները, որոնք գործադրվում էին զանազան կուսակցութիւնների ներկայացուցչիչների կողմից ժողովրդի տարբեր իրաւունքների դէմ, որոնք ընդարձակ չափերով պատուաստվում էին մեր երիտասարդութեանը իբրև քաղաքական դաստիարակութեան նմուշներ, թողնենք և այն թէ որքան նպատակայարմար էին և արդարացուցիչ այդպիսի գործելակերպերը քաղաքակրթապէս տգէտ ժողովրդին գիտակցութեան բերելու և պարտաճանաչութեան հասցնելու համար։ Դրանց դատապարտելիութիւնն ու սխալականութիւնը դուրս է որևէ կասկածից։

Մենք կանդ կանենք մի այլ ցաւալի երևոյթի վրա։

Քաղաքացիներից շատերը սարսափելի խնայիգերեսնա, անտարբեր վերաբերմունք էին ցոյց տալիս դէպի իրանց ընտրողական իրաւունքները. նրանք ընտրողական իրաւունք ունէին, բայց զրկվեցին նրանից լոկ այն պատճառով, որ նեղութիւն չէին կրում գնալ իրանց անունները մտցնել տալ ընտրողական ցուցակների մէջ։

Շատերը ընտրողական իրաւունք ունէին, մտցված էին ցուցակների մէջ, բայց բիւլետէններ չէին ստացել և որովհետև նեղութիւն չը կրեցին գնալ ստանալու, զրկվեցին իրանց ընտրողական ձայնի իրաւունքից։

Ոմանք ստացել էին բիւլետէններ, թեկնածուների անունները արդէն գրված, սակայն այդպիսիները կամ հրաժարվեցին քուէ տալուց, ձեռնպահ մնալով, կամ եթէ տուեցին էլ, տուեցին այնպիսիներին, որոնց չէին ճանաչում և, եթէ ճանաչէին էլ, չէին տայ։

Իսկ քաղաքացիների մի ստուար մասը, որոնք ինտելիգենտութիւնը առնասարակ իրանց ժենաշորէն են համարում, ներկայ դէպքում տարբերական գիտակցութեան և քաղաքացիական պարտականութեան ոչ մի ապացոյց չը տուեցին։ Անցեալ տարվայ տգեղ բռնութիւններն ու փողոցային ագիտացիան երևի ունեցել էին իրանց ներգործութիւնը և նրանք ընտրողական քուէից յօժարակամ զրկվելը գերադասեցին փողոցային անասնօրէութիւններից։

Այդ էլ մտածողութեան ընորոշ մի եղանակ է, որ յամենայն դէպս յոգնու այդ տեսակ «ինտելիգենտներին» չէ խօսում։

Մասամբ այդ ախտաւոր անտարբերութեան դէմ էր այս տարի ուղղված կուսակցութիւնների եռանդը Թիֆլիսում, որ դժբաղդաբար սահման ձև ստացաւ։

Իսկ Ալէքսանդրօպոլում, Երևանում, Գանձակում ընտրողներին սպառնալիքներով էին դուրս բերում տներից և ուղարկում իրանց քաղաքացիական պարտքը կատարելու համար. արտաքին մի խթան նրանց թելադրում էր քուէ տալ այս կամ այն ինչ կուսակցութեան մարդուն։ Եւ շատերը, չը նայելով որ անկիւններում տրտնջում, բողոքում էին այդ տեսակ գործելակերպի հերոսների դէմ, այնուամենայնիւ ստիպված էին, իրանց կամքի հակառակ, նրանց քուէ տալ։ Ոչխարի հօտի նման նրանց քշում էին փարախից փարախ, հրամաններ տալիս և քուէատուփի մօտ տանում։ Այդ տեսակ ընտրողները գնում էին մղիչ ոյժի թափով և կամ ինտրիգայի զօրութեամբ, բայց ոչ գիտակցօրէն։

Զարմանալի չէ, երբ այդ տեսակ ընտրողական մասուլի տակից դուրս եկած պատուիրակները Դանձակում նայում են զանազան հրամանատարների կամ շրջիկների ազդանշանին, Ալէքսանդրօպոլում կարիճների հրանգներին, Երևանում՝ խմբապետների բռունցքներին ու մտրակներին, որպէսզի Պետական Դումայի համար՝ ապակենտրօնացման սիստեմով զեկավարվող կենտրոնական մարմնի նախապէս որոշած պատգամաւորին տան իրանց ձայները։

Եւ ընտրում են կուսակցական անդամին առանց ուշադրութեան առնելու՝ թէ կարող է նա, արժանի է թէ՛ անարժան հայ ժողովուրդի ներկայացուցիչ լինելու. իսկ արժանաւորին թողնում ենք արտիվում։

Այդ չարիքի պատճառը պէտք է որոնել մեր անտարբերութեան, քաղաքական տգիտութեան և գիտակցութեան թուլութեան մէջ։

III

Մեր դժբաղդ իրականութիւնը հարուստ է այդ տեսակ տխուր փաստերով, անպատուաբեր երևոյթներով։

Մենք հրճվում ենք ու զարմանում՝ լսելով ուրիշի յաղթութիւնների մասին և մեր երևակայութեան մէջ փայփայում ենք յոյսեր մեր ապագայ յաղթանակի մասին։

Սակայն այն անտարբերութիւնն ու անհետաքրքրութիւնը, որ մենք ունենք, այդպիսի յոյսերը ցնորքներ են դարձնում։

Ներկայումս օրվայ հարցը Մոսկվայի յաղթանակն է։ Հասարակական խաւերում մեծ հիացմունքով են խօսում կադետների այդ յաղթութեան մասին։ Բայց այդ յաղթութիւնը աւելի է զնահատելի դառնում, երբ ծանօթանում ենք այն հերոսական ջանքերին, որ գործ են դրել Մոսկվայի սաւաշխատարները, ընտրող քաղաքացիները, բէակցիայի ոյժը տապալելու համար։ Այնտեղ ամեն մի քաղաքացի, գիտակից թէ անգիտակից, լաւատեղեակ է իրերի ծանր կացութեան և առանց խուսափելու շտապում է ընտրողական քուէատուփի մօտ իր քուէով քաղաքացիական պարտքը կատարելու և արտայայտելու իր կամքը բիւրոկրատական բէժիմի դէմ։ Սպառնացող վտանգի առաջ Մոսկվան իր ինտելիգենցիայի ու հասարակական գործիչների դեկավարութեամբ ծառանում է մի սիրտ, մի հոգի դարձած և արտասանում իր հրամայողական պահանջը։ Հիւանդներն անդամ թողնում են իրանց մահիճը և փնտրում քուէատուփի մօտ իրանց քուէն անձամբ տալու, որպէսզի չը կորչի իրանց այդ մի ձայնը։

Այդպիսի սրտայոյզ օրինակներ Մոսկվան շատ է տուել։

Մեր հասարակութեան ուշադրութեան համար այդ խրատական օրինակներից մենք կը յիշատակենք նրկու ընորոշ փաստ միայն։

«Русь» լրագիրը հաղորդում է, որ Մոսկվայի «Рус. Вѣд.» լրագրի բաժնագէրներից մէկը—յայտնի երաժշտագէտ Բլարամբերը, որ հիւանդ էր, այդ ընտրութեան օրը իրան շատ վատ էր զգում. մարմնի ջերմութիւնը սկսում է բարձրանալ։ Զը նայելով դրան, նա, հակառակ բժիշկի բողոքների, խնդրել է ինչ որ էլ լինի իրան անպատճառ տանել քուէատուփի մօտ, որպէս զի անձամբ կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը, իրագործէ իր ընտրողական իրաւունքը։ Եւ Նրան ձեռքերի վրա բռնած տարել են քուէատուփի մօտ, որտեղ հիւանդ ծերուկը անձամբ տուել է իր քուէն։

Նոյնը արել է և գեղարուեստական թատրոնի գիրեկտոր Ստանիսլավսկին։ Նա ծանր հիւանդ էր և այդ պատճառով էլ ներկայացումները շաբաթակում յետաձգում էին։ Բայց ընտրութեան օրը նա որոշում է գնալ անձամբ քուէ տալ և մեծ նեղութիւններ քաշելով, գնում է քուէատուփի մօտ ու տալիս իր ձայնը կաղտեներին։

Ահա ինչպիսի գիտակցական վերաբերմունք էր ցոյց տալիս Մոսկվայի քաղաքացին և ահա թէ ինչու նա կարողացաւ մի այդպիսի փաստաւոր յաղթանակ տանել։

Այդ սրտաշարժ օրինակները թող խրատական լինեն մեր հասարակութեան ու քաղաքացիների համար։

Ընտրողական քուէն մարդային իրաւունքի ու կամքի արտայայտութիւնն է, և յանցանք է գործում նա, ով իր անտարբերութեամբ կորցնում է նրան կամ խուսափում նրանից։

Լ. Դանիէլեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

1905 թ. մարտի 5-ին Իգդիրում իր տան մէջ սպանվեց Իգդիրի նախկին ատուտէր Եփրեմ Իսաբէգեանցը։ Այդ սպանութեան գործը քննվում էր այս օրերս Երևանի նահանգական դատարանում և իբրև սպանող մեղադրվում էր Յակովբ Բօչօ Յովհաննիսեանց։

Մեղադրական թերթի մէջ ի միջի այլոց կային հետևեալ հետաքրքիր կէտերը։ Երբ Իսաբէգեանը տանուտէր էր և օգտվում էր գաւառապետ Բօգուսլավսկու (նա ևս սպանվեց 1904 թ.) բարեհաճութեամբ, այն Բօգուսլավսկու, որը դիմում էր ամենախիստ միջոցների ճնշելու հայկական շարժումները... Իսաբէգեանցը, ի հարկէ, կասկածվում էր հայերի կողմից իբրև նպաստող և օգնող Բօգուսլավսկուն։ Իբր թէ դրա՛ Իսաբէգեանցի մահից 3 օր առաջ գալիս է դրա մօտ Արամ Ռուստամեանը և հրաւիրում է Մկրտիչ Սենեքերիմեանցի տունը, որտեղ Մուշեղ Աւագեանի, Պետրոս Պողոսեանի և Աւետիս Սողոմոնեանի ներկայութեամբ պահանջում են հայոց կօմիտէտի գլխաւոր ղեկավարների անունից, որ Իսաբէգեանը ժամի այդ կօմիտէտի մէջ իբրև անդամ՝ սպառնալով հակառակ դէպքում սպանել նրան, նրա նախկին գործունէութեան պատճառով։ Իսաբէկեանը նկատի ունենալով այդ սպառնալիքը, համաձայնվում է։ Սրանից մի օր յետոյ Իսաբէգեանը սպանվում է։ Շուտով վկայի ցուցմունքով կօմիտէտը իրօք կասկածում էր Իսաբէգեանին նրանում, որ նա հայերի գաղտնիքը յայտնում էր գաւառապետին, որի համար կօմիտէտը դատապարտել էր մահվան Իսաբէկեանին և Բօգուսլաւսկուն։ 1903-ին փորձ էր եղել սպանել Իսաբէգեանին, որը մինչև այդ ստացել էր կօմիտէտից սպառնական նամակներ։ իսկ 1904 թ. սպանվել էր Բօգուսլաւսկին։ Իսաբէգեանը այդ ժամանակ աշխատում էր փբրկանք տալով ազատել իր կեանքը կօմիտէտից և հէնց այդ պատճառով բանակցութեան մէջ էր մտել նրանց հետ, բայց ոչ մի դրական հետևանքի չէր հասել։

Բացի մեղադրական այս կէտերից, որոնք ինքնըստինքեան լոյս են գցում Իսաբէգեանցի գործի վրա, այս գաղը հետաքրքրական էր և և այն տեսակէտից, որ դա կապված էր Սուրմալուի նախկին գաւառապետ Բօգուսլաւսկու անուան և գործունէութեան հետ։ Իսկ թէ ինչ մարմնի նախապէս որոշած պատգամաւորին տան իրանց ձայները։

Եւ ընտրում են կուսակցական անդամին առանց ուշադրութեան առնելու՝ թէ կարող է նա, արժանի է թէ՛ անարժան հայ ժողովուրդի ներկայացուցիչ լինելու. իսկ արժանաւորին թողնում ենք արտիվում։

Այդ չարիքի պատճառը պէտք է որոնել մեր անտարբերութեան, քաղաքական տգիտութեան և գիտակցութեան թուլութեան մէջ։

III

Մեր դժբաղդ իրականութիւնը հարուստ է այդ տեսակ տխուր փաստերով, անպատուաբեր երևոյթներով։

Մենք հրճվում ենք ու զարմանում՝ լսելով ուրիշի յաղթութիւնների մասին և մեր երևակայութեան մէջ փայփայում ենք յոյսեր մեր ապագայ յաղթանակի մասին։

Սակայն այն անտարբերութիւնն ու անհետաքրքրութիւնը, որ մենք ունենք, այդպիսի յոյսերը ցնորքներ են դարձնում։

Ներկայումս օրվայ հարցը Մոսկվայի յաղթանակն է։ Հասարակական խաւերում մեծ հիացմունքով են խօսում կադետների այդ յաղթութեան մասին։ Բայց այդ յաղթութիւնը աւելի է զնահատելի դառնում, երբ ծանօթանում ենք այն հերոսական ջանքերին, որ գործ են դրել Մոսկվայի սաւաշխատարները, ընտրող քաղաքացիները, բէակցիայի ոյժը տապալելու համար։ Այնտեղ ամեն մի քաղաքացի, գիտակից թէ անգիտակից, լաւատեղեակ է իրերի ծանր կացութեան և առանց խուսափելու շտապում է ընտրողական քուէատուփի մօտ իր քուէով քաղաքացիական պարտքը կատարելու և արտայայտելու իր կամքը բիւրոկրատական բէժիմի դէմ։ Սպառնացող վտանգի առաջ Մոսկվան իր ինտելիգենցիայի ու հասարակական գործիչների դեկավարութեամբ ծառանում է մի սիրտ, մի հոգի դարձած և արտասանում իր հրամայողական պահանջը։ Հիւանդներն անդամ թողնում են իրանց մահիճը և փնտրում քուէատուփի մօտ իրանց քուէն անձամբ տալու, որպէսզի չը կորչի իրանց այդ մի ձայնը։

Այդպիսի սրտայոյզ օրինակներ Մոսկվան շատ է տուել։

Մեր հասարակութեան ուշադրութեան համար այդ խրատական օրինակներից մենք կը յիշատակենք նրկու ընորոշ փաստ միայն։

«Русь» լրագիրը հաղորդում է, որ Մոսկվայի «Рус. Вѣд.» լրագրի բաժնագէրներից մէկը—յայտնի երաժշտագէտ Բլարամբերը, որ հիւանդ էր, այդ ընտրութեան օրը իրան շատ վատ էր զգում. մարմնի ջերմութիւնը սկսում է բարձրանալ։ Զը նայելով դրան, նա, հակառակ բժիշկի բողոքների, խնդրել է ինչ որ էլ լինի իրան անպատճառ տանել քուէատուփի մօտ, որպէս զի անձամբ կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը, իրագործէ իր ընտրողական իրաւունքը։ Եւ Նրան ձեռքերի վրա բռնած տարել են քուէատուփի մօտ, որտեղ հիւանդ ծերուկը անձամբ տուել է իր քուէն։

Նոյնը արել է և գեղարուեստական թատրոնի գիրեկտոր Ստանիսլավսկին։ Նա ծանր հիւանդ էր և այդ պատճառով էլ ներկայացումները շաբաթակում յետաձգում էին։ Բայց ընտրութեան օրը նա որոշում է գնալ անձամբ քուէ տալ և մեծ նեղութիւններ քաշելով, գնում է քուէատուփի մօտ ու տալիս իր ձայնը կաղտեներին։

Ահա ինչպիսի գիտակցական վերաբերմունք էր ցոյց տալիս Մոսկվայի քաղաքացին և ահա թէ ինչու նա կարողացաւ մի այդպիսի փաստաւոր յաղթանակ տանել։

Այդ սրտաշարժ օրինակները թող խրատական լինեն մեր հասարակութեան ու քաղաքացիների համար։

Ընտրողական քուէն մարդային իրաւունքի ու կամքի արտայայտութիւնն է, և յանցանք է գործում նա, ով իր անտարբերութեամբ կորցնում է նրան կամ խուսափում նրանից։

Լ. Դանիէլեան

ԴՈՆԻ ԿԱԶԱԿԱՆԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՇՎԻՆ

Փետրվարի 2-ին Պետերբուրգում Փ. Բ. Բատիշչովի նախագահութեամբ կայացել է ռուսաց գրականական ֆոնդի տարեկան ընդհանուր ժողովը։ Նիստը բանալով, նախագահը մի հատուկոտ ճառ է նուիրում ֆոնդի նորերս մեռած անդամների—Մենդելեյևի, Սպասովիչի և միւսների յիշատակին։ Այնուհետև մատանդարը, որ վերջին երկու տարիներս ֆոնդը գտնվում է նիւթական դժուար կացութեան մէջ, յոյս է յայտնում, որ Վէչերբերգի հնարած լոտոբէյի ծրագիրը կը ծածկէ ֆոնդի դեֆիցիտը։ Քարտուղարի և գանձապահի կարդացած զեկուցումներից երևում է, որ չը նայելով աննպաստ ֆինանսական դիրքերին, ֆոնդի գումարները այնուամենայնիւ 1906 թ.ի ընթացքում հասել են 685,141—691,942 ռուբլու, այսինքն, համարեա, աւելացել է 7000 ռուբլի։

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

—Փետրվարի 4-ին գիշերվայ ժամի 4-ին, ոստիկանները մի անպէտ խումբ անպատասելի կերպով գաւում է Պետերբուրգի համալսարանի սեղանատունը և սկսում է մանրազնին խուզարկութիւն կատարել։ Տարել է ամբողջ լեռալ և անկեալ գրականութիւնը։ Ոչ դէնք և ոչ էլ ռումբ չէ գտնվել։ Ցաղորդ առաւոտեան ոստիկանութիւնը ժանդարմական փոքրիկ զօրամասի հետ ներս մտնելով համալսարան և գրաւելով բոլոր մուտքերը, սկսում է խուզարկել բոլոր ներկայ եղողներին։ 11-դ լսարանում տեղի ունէր այդ ժամանակ սովորական նիստերից մէկը կողմնակի անձանց մասնակցութեամբ։ Լսարանում ներկայ եղող 71 հոգին կալանաւորվում են և ուղարկվում Վիբօրգի բանտը։ Կալանաւորներին տանում են հեծեալ և հետևակ զօրաջոկոյների ուղեկցութեամբ։ Համալսարանից դուրս գալիս ուսանող Մ.ին այնքան են ծեծում մտրակներով, որ մեռած դրութեամբ տանում են հիւանդանոց։ Կալանաւորների թւում կան և աւագների խորհրդի երկու անդամները։ Միւս լսարանում կալանաւորված են 25 հոգի, որոնք չեն ուզեցել յայտնել իրանց անունները։

Համալսարանի տեսուչ Բօրգմանը, որ գլխաւորելով խուզարկութեան ուրիշով գնացել էր ժողովրդական լուսաւորութեան մինիստրի մօտ, վերադառնալով այնտեղից տեսնում է արդէն համալսարանը գրաւված ոստիկանութեան կողմից։ Երեկոյեան ժամի 8-ին ոստիկանութիւնը հեռանում է համալսարանից։

Մեծ յուզմունք է առաջ բերել պրոֆեսսորների և ուսանողների մէջ համալսարանական ինքնավարութեան այդ կոպիտ խախտման ձևը, որ թոյլ է տուել ադմինիստրացիան։

Նոյն օրը ուսանողները ժողով են դումարել խորհրդածելու այդ առիթով։ Դասադուլի և համալսարանի փակման մասին արված առաջարկութիւնները մերժվել են միաձայն բոլոր կուսակցութիւնների կողմից։ Ժողովը ձայների մեծամասնութեամբ մի բանաձև է ընդունել, որով հաստատվում է սեպտեմբերի 1-ի ժողովի որոշումը, որի հիման վրա համալսարանը բացվում է գլխաւորապէս նրան ազատական շարժմանը ծառայեցնելու համար։ Որոշել են դիմել պրոֆեսսորների

պահանջում էր բաւարարութիւն։ Արդեօք միջնորդ դատաւորները եթէ չէին կամենում լոկ ֆիզուբանների դեր կատարել, պարտաւոր չէին այդ հարցը քննել, մանաւանդ որ այդ կէտը ոչ թէ միայն առնչութիւն ունէր նոյեմբերի 9-ի միջնադէպի հետ, այլ հէնց դա էր սկզբնապատճառը և տեղիք տուեց ցաւալի իրողութեան, որը զարձաւ դպրոցի մէջ կատարվող ողբերգութեան նախերգանքը։ Այսինքն՝ թէև պ. Մելքոնեանը կազմակերպել էր ազգերասական միութիւնը», բայց վարչութեան մէջ ձայն չունէր, այլ խորհրդատու էր միայն (ինքը Մելքոնեանը այդ փաստը խոստովանեց)։ Սակայն, երբ նոյեմբերի 9-ի ժողովին, ուր հրաւիրված էին դասախօսներ, մի քանի աշակերտներ բարձր դասարաններից (ոչ վարչականներ), որոնց գրաւում էր հետաքրքիր նիւթ՝ կամեցան ներկայ լինել, դիմեցին ընկեր վարչականներից մի քանիսին։ Վերջինները խոստացան ժողովի սկզբում այդ հարցը դնել քուէարկութեան, բայց պ. Մելքոնեանը ինքնաբերաբար, կարուկ կերպով դիմեցրեց և տեղիք տուեց միջնադէպին։ «Վարչականները ձեռնտա չէին այդ հարցում, ուստի ես ինձ իրաւունք համարեցի» բացատրում էր պ. Մելքոնեանը։

Երբ դատաւորների առաջ վկայ Վ. Գասպարյանը (վարչական) բացատրում էր դէպքը, հարցը կատարելապէս լուծելու համար (և ոչ թէ պ. Մելքոնեանին վիրաւորելու, ինչպէս թերևս նրան հիւանդ երևակայութիւնը, կամ աւելի շուտով նրա «պաշտպանների» հանդգնութիւնը, բոլորովին օրիէկտիվ կերպով դիմում եմ վկային։

—Ասացէք, խնդրեմ, պ. Կանայեան, ինչպէս էք բացատրում, որ պ. Մելքոնեանը, չունենալով ձայն վարչութեան մէջ՝ այդպիսի մթապնական կանոնով վարվեց։

Բուսական էր միայն մի նախադասութիւն վկայի կողմից։

—Ճիշտ է, ձայն չունէր, բայց մենք խնդրել էինք նրան, իբրև կազմակերպողի, ղեկավարել մեզ։

Տրամաբանօրէն սպասում էր այդ պատասխանին, այլապէս դժուար էր ձեր վարմունքը բացատրել, պ. Մելքոնեան։

Պատասխանը կը լուծէր ամէն ինչ, թէ բացասական և թէ դրական մտքով։

Խոստովանում եմ, որ այդ հարցը պարտաւոր էի բոլոր վարչականներին տալու, գործը պարզելու համար միայն, առանց մի որևէ վիրաւորելու մտադրութեան։

Բայց հէնց որ Մելքոնեանի «պաշտպանները» «ցեղափոխական» նուրբ ականջին հասաւ «միապան» հնչիւնը, բուռն բողոք բարձրացաւ։

—Սա դատաւոր չէ, այլ փաստաբան է,—դիմում է նախագահին Ց. Մելիքեանը։

«Փաստաբան» մականունը մի քանի անգամ լսում էր դատաւորների կողմից, հէնց որ նա պահանջում էր, որ աշակերտների անփորձ ներկայացուցիչներին էլ տրվեն նոյն դիւրութիւնները, ինչ որ վայելում էր պ. Մելքոնեանը։ (Այդ փաստը խոստովանվում է պարոնը իր անմահ թուղթերի մէջում)։

Վերջին անգամ բողոքը տրված էր պաշտօնապէս, իմ անաղութիւնը ենթարկվեց բացատրութեան, անհիմն կերպով։ Ես այլ ևս չը կամեցայ մանակցել այդ կատակերգութեանը, որը կոչվում էր «միջնորդ դատաւորներ» և հրաժարվեցի։

Ահա այստեղ անցնում ենք պ. Մելքոնեանի գլխաւոր դրպարութեան կէտին։

«Տիկնիկ հեռացաւ դատարանից, կորցնելով կոչ անելով աշակերտներին դադարեցնել «միջնորդ դատաւորի» նիստերը, որովհետև բոլորը պաշտպանում են պ. Մելքոնեանին»։

Ինձ համար հանելուկ է, երբ դուք պ. Մելքոնեան, վերարտադրում էիք զրկով այդ փաստը (?!), ինքներդ հաւատացած էիք նրանց անհերքելի ճշմարտութեան մէջ։ Արդեօք իմ «կօրրիդօրեան կոչը» ձեր հարուստ երևակայութեան արդիւնքն է, թէ ձեր «պաշտպանները» լուրջ ակնարկութիւն։ Երկու դէպքում էլ խորհուրդ եմ տալիս նախ խորը քննադատութեան ենթարկել և ապա յանդուգն կերպով հրապարակ դուրս գալ մեղադրելու, որովհետև երբ փաստի սուտիւնը կը պարզվի, նա կը դառնայ ձեզ համար, սայթաքման այն քարը, որի դէմ անզօր կը լինէք կռանալու։

Խոստովանվում եմ, իբրև միջնակարգ դպրոցի ուսուցչից ես սպասում էի աւելի կորովկամ վերաբերմունք, առնուազը՝ խեղաթիւրելու ընդունակութիւնից պէտք է բարձր լինէիք։

Առ այժմ, ես կարիք չեմ զգում ինձ արդարացնելու։ Դէպքի քննութիւնը ապագայում կը պարզի այդ բոլորը, կասեմ միայն հետևեալը։

Մութ կօրրիդօրում, ուր ես դուրս եկայ, մարդ չը կար։ Միւս սենեակում լսվում էին աշակերտների ձայները։ Կանչեցի ճրագ տալ։ Իսկոյն հաւաքվեցին 6-7 աշակերտ, տասնիկները լավագոյն ձեռքին։ Եթէ այդ աշակերտները, որոնք անմիջապէս վկայ էին և լսում էին իմ հանդիսացող խօսքերը։ «Մի վրդովվէք, եղէք հանգիստ... վաղը կընտրէք ուրիշ դատաւոր։ Հաւատացէք, եթէ արդարութիւնը ձեր կողմն է, վերջ ի վերջոյ կը պարզվի» եթէ այդ աշակերտները կաղաւաղն իմ ասածները, սուտ վկայութեամբ կը խեղաթիւրեն փաստը, ինձ մնում է միայն ասել։

—Ուրեմն, ոչինչ մխիթարական չը կայ մեր շուրջը։ Թող ամէն ինչ ոչնչանայ։ Թող կործանվի և այն զոլորը, որ մնացնում է միայն ցածը ընդդեմ, մտաւոր ու բարոյական այլասերում է առաջ բերում։

«Մի քանի մարդանց ձեռքին 47 աշակերտ (4 բարձր դասարանների աշակերտութեան 3/4) կոյր գործիք են դարձել»։

Ոչ նրանք կոյր չեն, դա մեծ սխալ է։ Նրանք չեն կարող չը տեսնել թէ ինչ մէջոցներով են կամենում արդարութիւնը ոտնակոխ անել, չեն կարող չը զգալ, որ մի «անեւնոյթ մախինացիա» ուժգին գործում է, այլապէս անհնարին է ենթադրել թէ՝ կարելի է արդիւք մի ուսուցչի համար փողոց նետել, մանանել անգործութեան 47 երիտասարդ ոյժեր։

Սակայն, աւելորդ եմ համարում մի առ մի պատասխանել այն ինսինուացիաներին, որոնք առատօրէն շռայլում է պ. Մելքոնեանը։ Իր գրասենեակների և առևտրական արդիւնարարութիւնների ծառայողները վճռել են դադրեցնել պարապմունքները։ Փակվում են կանանց բարձրագոյն կուրսերը։ Գրեմիէր Սոսլիպինն հեռագիր են ուղարկում աղերսելով վերջ տալ այդ բռնութիւններին։ Լաւ կայ, որ Կաուլբարը Պետերբուրգ է կանչված։

Ուսանողական ժողովը նորից է հրաւիրված համալսարանի փակման ժամանակի մասին խորհրդակցելու։ Մեծամասնութիւնը այն կարծիքն է յայտնում, որ համալսարանը պէտք է բանալ միայն նոր Դումայի առաջին նիստի օրը, յոյս ունենալով, որ Դուման կը սահմանէ միջոցներ ձեռք առնել Օդեսայի անկարգութիւնների դէմ։

—Մինոյն դէպքի մասին «Новь» լրագրին փետրվարի 5-ին հաղորդում են Օդեսայից, որ այնտեղ ծեծված ու խոշտոնված են բազմաթիւ տղամարդիկ և կանայք։ Ծեծի են ենթարկվել մեծ թիւով գօրավարներ և թաղական-վերանայիչներ, որոնք արդիւնք են եղել ուսա դաշնակցութեան դրօշակներ պարելու։ Բաւականին թիւով խանութներ են կողոպտված։ Երեկոյեան ընթրիքից յետոյ սկսել է գործել բանւորական ինքնապաշտպանութիւնը։ Դնդակաձգութիւն է սկսվել երկու կողմից էլ։ Երկու կողմից էլ վիրաւորներ կան։ Ոստիկանութիւնը կալանաւորել է բազմաթիւ երիտասարդներ, որոնց վրա կասկած կայ, որ նրանք ժամանակել են ինքնապաշտպանութեան գործին։ Ընդամենը 4 օրվայ ընթացքում ծեծվածների և խոշտոնվածների թիւը հասնում է 250 հոգու։ Բացի խանութներից թալանված են 3 պանդուկ և թէյարանները, ուր առհասարակ յաճախում են բանւորները։ Դեմօկրատական բլոկի թերթիները ցրող ուսանողուհի Գեչկինան կալանաւորված է ռազմախմբերի հետ միասին։ Յաջորդ օրը նրան ուշաթափ դրութեան մէջ տեղափոխում են հոգեկան հիւանդների հիւանդանոցը։ Մերժում են յանձնել ծնողներին։ Պաստուիրակների ժողովում սոց.-յեղափ. թեկնածուն ձայները չը բաժանելու և բեսարեսիաների տեղիք չը տալու համար հրաժարվում է թեկնածութիւնից։

ՆԱՄԱԿ ԴԱՆՉԱԿԻՑ

—

փետրվարի 10-ին

Ինչպէս յայտնի է, այն վայրում, ուր կատարվել է Լօյանէի սպանութեան դէպքը, երկու շարք խանութները, ինչպէս նաև հայոց մասի կլուբը փակված են, և խանութպաններն էլ բանաստեղծութեան դատապարտված երեք ամիս ժամանակով։

Այսօր թաղական պրիստաւի օգնականը առաւօտեան վաղ յայտարարել է, որ գեներալ-նահանգապետի հրամանագրով կը բացվեն կլուբը և կնքված խանութները։

Ժամի մօտ 12-ին շուկայ գալով՝ գնդապետ Սաֆոնովը յայտնեց, որ խանութատերերն իրաւունք ունեն իրանց փակ խանութները բանալու։ Խանութպաններից երեք թէ չորս հոգի, որոնք ընկեր կամ եղբայրներ ունեն, հնարաւորութիւն կունենան այդ բարիքը վայելելու—խանութները բանալու, իսկ Յաջորդների համար այդ բարիքը գրօշի գին չունի, քանի որ տէրերը կը մնան բանտարկված։

Բոլոր բանտարկեալները պատկանում են այնպիսի դասակարգի, որ Լօյանէի դոյութեան մասին գաղափար անգամ չեն ունեցած։ Վերին ատիճանի աննախանձելի և դժուարին է, մինոյն ժամանակ չափազանց ցաւալի է խանութպանների կացութիւնը, որոնք թուրքաց թաղում ամբողջ ունեցածը կորցնելով, նոր էին սկսել «ծիլ-ծիլի վրա դնել» և Ռուսաստանի բարեբար մարդկանց փրկարար աջակցութեամբ սկսել էին իրանց տուր և առը, այն էլ Լօյանէի սպանութեամբ գլխներին հառամ դարձաւ...

Նրանց ապրանքները մնացել են կայարանում թափված, մուրհակները բանկերում չը վճարված, և այսպիսի պարագաներում, խանութների բանալու հրանգը ոչ մի բարիք չէ տալիս խանութատէրերին, երբ վերջիններս կը մնան բանտում, ընականաբար խանութներն էլ կը մնան փակ։

Հայ հասարակութեան ներկայացուցիչները խանութ բանալու լուրն առնելուն պէս իրանց պարտքը համարեցին իրանց շնորհակալութիւնը յայտնելու քաղաքի պահպանութեան վերահսկիչ գնդապետ Սաֆոնովին, բայց գնդապետը պատասխանել է, որ ինքը հրաժարվում է հայ հասարակութեան շնորհակալութիւնից, քանի որ նահանգապետն է հրամանագրել խանութները բանալ։

Հայ հասարակութեան ներկայացուցիչները իրանց խօսքը փոխելով, գնդապետի ուշադրութիւնն հրաւիրեցին այն հանգամանքի վրա, որ թէև խանութները բանալու իրաւունք տրվեցին էլ, բայց բանալու հնար չկայ, քանի որ տէրերն բանտարկված են, ուստի խնդրեցին այդ իմաստով միջնորդել գեն. Նահանգապետի մօտ, և խանութպաններին ազատելու համար աջակցել։

Գնդապետը խոստացաւ այս գործում չը խնայել իր աջակցութիւնը և այս երեկոյեան խօսել գեներալ Բառէրի հետ։

Աւ. Սահակեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, փետրվարի 11-ին, երեկոյեան ժամը 8-ին Թիֆլիսի կայարանում ժողովվել են Թիֆլիսի և Ռուֆայիսի նահանգների կողմից ընտրված Պետական Դումայի անդամները, որոնք ուղևորվել են Պետերբուրգ։ Մինչև պատգամաւորների կայարանից գնացքով մեկնելը, կայարանը շրջապատված է եղել զօրքերով և ոստիկանական պաշտօնեաներով, որոնք ոչ ոքի չէին թողնում մանել, կամ դուրս գալ կայարանից։

—

Շաբաթ օր, հակառակ Բագուի «Հիդայէթ» ժողովի ընդունած որոշումին և կատարած պաշտօնական յայտարարութեան, Թիֆլիսում, գժբաղդաբար տեղի ունեցաւ մահմեդականների սգի արարողութիւնը, իր սովորական կարգով։ Դուրս ճղելու, կուրծք ծեծելու և շղթայով մարմինը մահացնելու վայրենի դէպքերը նորից տեղի ունեցան և սգաւորներից շատերը՝ մահացու վիրաւորված՝ ընկան։ Մահմեդական գիտակից ոյժերը անդեամաձգելի պարտականութիւն ունեն, խօսքի և գրի բուռ ատրճանակի մէկ հարուածով տեղնուպրօպագանդայով, այդ տխուր երևոյթի առաջն առնելու։

—

Թիֆլիսի գեներալ-նահանգապետը թոյլատրել է բանալ Ալեքսանդրեան այգին։

—

«Кавказъ» լրագրի բախտը պարզվեց վերջնականապէս։ Փոխարքայի դիւանատունը վճռել է վերցնել հրատարակութիւնը Գ. Ա. Օսիպովինի ժառանգներից։ բայց թէ ով կը հրաւիրվի խմբագիր, առայժմ յայտնի չէ։

—

Փետրվարի 10-ին, Անտ. Զարիբեանի, Խրիստաֆ. Մարութեանցի, Խրիստ. Զեմեկեանցի և Ստեփ. Թարադանի մագազիններում երևան են հանված վեցած 7 կօպէկանոց նամակադրոշմներ (մարկաներ)։ Քննութիւնը պարզել է, որ նամակադրոշմները պատրաստելիս է եղել Թիֆլիսի քաղաքացի Դերասիմ Դեմուրովը, որը ընկվում է Հալաբարում Ղարիբանի տանը։ Դեմուրովը անյայտացել է։

—

Փետրվարի 18-ին Մոսկվայում ռուսաց ազնուականների ժողովատեղում կայանալու է հայկական երեկոյթ յայտնի կայսերական և մասնաւոր թատրոնների արտիստների և արտիստուհիների մասնակցութեամբ։ Փորձիկ ճաշիցը ամբողջապէս կատարված կը լինի գրվերով և զարդարված արևելեան ճաշակով։ Հրաւիրվում է յատուկ արևելեան նուագախումբ։ Բեմի վրա տեղի կունենան կովկասեան ազգային ընտրող պարեր։ («Новь»)

—

Շաբաթ, փետրվարի 17-ին, Արտիստական ընկերութեան թատրոնում յօգուտ վրաց Բարեգործական Ընկերութեան կը ներկայացվի «Դատաստանութիւն» պիեսը։

—

Փետրվարի 11-ին երեկոյեան ժամը 9-ին Աբաս-Աբադեան հրապարակում անյայտ չարագործների ձեռքով սպանվել է մի ռուս կին։

—

Լոյս փետրվարի 5 և գիշերը 3 անյայտ չարագործներ յարձակվել են Բաթայիսի նահանգի Օրչա գիւղի բնակիչ Դ. Մաչխատէի տան վրա, խլել են 120 բուբլի փող և 1000 բուբլու զանազան իրեր և անյայտացել են։

—

Մօտ օրերս Պետական Դումայի շինութեան մօտ զինուորական պահակների հսկողութիւնը վերականգնվում է։ Առաջին օրապահութիւնը կանի զվարդիական գնդերից մէկը։ Պահապանները արդէն պատրաստ է և օֆիցերներն ու զինուորները տեղաւորվել են այնտեղ։

(«Бирж. Вѣд.»)

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի խորհուրդը վերջացնում է երկաթուղիներով առանց տոմսակների երթևեկող ճանապարհորդներին քրէական պատասխանատուութեան ենթարկելու հարցի վերաքննութիւնը։ Վճռված է Պետական Դումա մտցնել մի այսպիսի օրինագիծ, որի համաձայն անտոմսակ ճանապարհորդին ենթարկել 300 ր. առգանքի կամ 6 շաբաթվայ բանտարկութեան։

—

Մոսկվայում լոյս տեսնող «Новь» լրագրում տպված է. «Վերջին օրերս շատ պրոֆէսորներ նամակագրութիւններ են ստանում «Թիֆլիսում պոլիտեխնիկում հիմնելու խնդրով զբաղվող դլխաւոր յանձնաժողովից, որոնցով խնդրվում է յայտնել, թէ ի՞նչպիսի կազմակերպութիւն ցանկալի է տալ Թիֆլիսում հիմնվող պոլիտեխնիկումին, ի՞նչ բաժանմունքներից, արդեօք, հարկաւոր է կազմել նա, և ի՞նչպիսի ամբիոններ մտցնել իւրաքանչիւր բաժանմունքի կազմի մէջ։ Ընդ սմին յանձնաժողովը հաղորդում է, որ նա խորին շնորհակալութեամբ կընդունէ և ուրիշ այլ կարծիքներ յարգեցած հարցի վերաբերութեամբ։ Հաղորդ է ցոյց տրված—Կովկասի Փոխարքայի դիւանատուն, զինուորա-քաղաքացիական վարչութիւն։ Մակայն վերին ատիճանի հետաքրքիր է հարցիս իմանալ թէ արդեօք ինչ մարդկանց է բաղկացած յանձնաժողովը և թէ ինչու նա զբաղվում է սերա յարաբերութեան մէջ դիւանատուն զինուորա քաղաքացիական վարչութեան հետ։ Բաւական վիճելի է հանդիսանում նաև ասուած՝ ինչ պրոֆէսորների այդօրինակ հարցուփորձի առնասարակ ընտրութիւնը մի այնպիսի լուրջ և կարևոր հարցի նկատմամբ, որպիսին է բարձր կրթական հաստատութեան բացման հարցը, որը պէտք է ծառայէ Ռուսաստանի ամենահարուստ և միևնոյն ժամանակ ամենադժբախտ երկրներից մէկին»։ («З.»)

—

Մոսկվայի յայտնի կապիտալիստներ Պալիաոլները, որոնց միջոցներով են հիմնված Մոսկվայի միջազգային, Օրլովի ատատրական և հարաւա-ռուսական բանկերը, ներկայումս գերմանացի խոշոր ընկերակցութիւնների հետ բանակցութիւններ են վարում՝ վաճառելու նրանց յիշեալ բանկերը։ Լուրերին նայած, կողմերը արդէն մօտ են վերջնական համաձայնութեան։

—

Փետրվարի 10-ին, ցերեկվայ ժամը մօտ 2-ին, Գր. Սալիկը յայտնել է 5-րդ քաղաքամասի պրիստաւին, որ Շելկովնիկովսկայա փողոցում գտնվող իր մամի գործարանի դուռը բաց է արել մի անյայտ անձնաւորութիւն և գողացել է մօտ 20 պուդ մոմ 660 բուբլի արժողութեամբ։

—

Մօտ օրերս Թիֆլիսի նահանգապետը հաստատել է Թիֆլիսի ելեքտրաքարշի ծառայողների միացեալ դաշնակցութեան կանոնադրութիւնը։ Միաժամանակ մեզ հաղորդում են, որ ելեքտրաքարշի ծառայողները ընտրել են մի մասնաժողով, որը ինքնուրոյն կերպով քննելու է հասարակութեան կողմից ուղղված դժգոհութիւնները։

—

Սղնախի գաւառի Զալտրանի և Զեդաւանի գիւղերի բնակիչները կողոպտիչներին թագնելու համար, Թիֆլիսի գեն.-նահանգապետից դրամական տուգանքի են ենթարկվել 1-ական բուբլի իւրաքանչիւր ծխից։

—

Փետրվարի 10-ին, երեկոյեան ժամը 7 և կէսին 7 րդ քաղաքամասում Հալաբարի հրապարակի մօտ, Լազարեան փողոցի ծայրում ատրճանակի մէկ հարուածով տեղնուտեղը սպանվել է Մեաէխի բերդի կառավարիչ Բօնտարէնկօն։ Դնդակը կպել է ականջին, կրակոցն վրա են հասել ոստիկանները, սակայն չարագործը կարողացել է փախչել։ Ոստիկանութիւնը դէպքի տեղի մօտերը դնել է 13 խանութներ, կրպակներ և գինետներ։

—

«Մշակի» №32-ում մենք տպել էինք գինեվաճառ Կուզանովի սպանութեան լուրը։ Այժմ մեզ հաղորդում են դէպքը հետեւեալ մանրամասնութեամբ. փետրվարի 10-ին, ցերեկվայ ժամը 1-ին, 2 անյայտ անձեր մտել են Կուզանովի գինետունը, որը գտնվում է Գօլովինսկի պրօսպեկտում և Կուզանօվի գործակատար Ուսենաշվիլիից պահանջել են տալ իրանց այն 200 բուբլին, որի մասին գրել էին Կուզանօվին գաղտնի կազմակերպութեան կողմից, կամ նամակը վերադարձնեն։ Բայց այդ ժամանակամիջոցում հասել է ոստիկանութիւնը. չարագործները սկսել են փախչել, բայց նրանց վրա սկսել են կրակել։ Չարագործներից մէկին ձերբակալել են, իսկ միւսը օգտվելով առաջացած իրարանցումից և հաւաքված բազմութիւնից, կարողացել է անյայտանալ։ Ձերբակալվածը իրան անուանել է Օզուրգէթի գաւ. Օկեսի գիւղի բնակիչ Եակով Գնտարիա. նա վիրաւորվել էր մէջքից։ Գնտարիան մերժել է տալ իր ընկերակցի անունը, բայց յայտնել է, որ նա իմերել է Աբսեն անունով։ Ձերբակալվածը ուղարկված է կօմենդանտային վարչութիւնը։

—

Մէջ. տագի օգնական ընտրվել է Ս. Կ. Ապրիամօվը։

—

Զէժօ Խոդաբաի գիւղի (Թելաւի գաւ.) բնակիչները միջնորդութիւն են յարուցել բարձր իշխանութեան առաջ, որով խնդրում են տալ իրանց օգտվելու համար պետական ազատ վարելահող և արօտատեղիներ։

—

Կիրակի, փետրվարի 10-ին, Թիֆլիս է ժամանել պաշտօնավարական գործերով Բագուի քաղաքապետ գեն. մայոր Գօնչարովը։

—

«Բագու» լրագրում կարդում ենք. «Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Օրեր» լրագրի աշխատակիցները և խմբագրութեան անդամները յայտնում են ի գիտութիւն ընթերցող հասարակութեան, որ նրանք, ի նկատ առնելով յիշեալ լրագրի խմբագիր-հրատարակչի հետ ծագած կոնֆլիկտը, ստիպված են դադարել աշխատակցել լրագրին։ Լրագրի ընթերցողները շատ կարճ ժամանակամիջոցում բաւարարութիւն կը ստանան նոր լրագրով։ Խմբագրութեան և աշխատակիցների կողմից. Ս. Կասեան, Ս. Ապէեան, Ս. Շահումեան»։

—

«Բագու լրագիրը ամենաարժանահաւատ աղբիւրներից լսել է, որ Բագու քաղաքում ուժեղ ժանտախտ է երևացել եղջիւրաւոր անասունների մէջ։

—

«Իրշադ» լրագրի խմբագիր Ահմեդ-բէկ Աղայեւը, որ վերջերս է վերադարձել Կովկասում կատարված ճանապարհորդութիւնից, իր առաջնորդող յօդուածում ասում է. «Իմ անձնական դիտողութիւնները բաւականաչափ համոզեցին ինձ, որ Կովկասի մահմեդականները գտնվում են կոշտական և ոչնչացման սպառնալի եզերքին։ Այս անվիճելի է և լիովին հասկանալի։ Եթէ մի ժողովուրդ, յանձին իր առանձնակի տարրերի, ապահովված չէ հասարակական շահերով և վերջիններին հասնելու ճանապարհ որոշել հեռանդ և ջանք երևան չէ հանում, շատ բնական է, որ նա ատիճանաբար կազմալուծվում է և գնում է բացարձակ անկման հասարակա-կուլտուրական մտքով։ Կազմալուծման հէնց այդօրինակ ատիճանին են հասել Կովկասի մահմեդականները։ Եւ այդ վշտալի արեւելքը պայմանաւորվում է նրանով, որ ժողովուրդը անգիտակցաբար գտնվում է ինքնանոչ գործիչների իշխանութեան ներքոյ, գործիչներ, որոնք մերժում են հասարակական գործը անձնական շահերի ասպարէզ դարձնողներին։ Իւրաքանչիւրը նրանցից պահանջում է, որ նրա կարծիքը որքան էլ որ նա աբսուրդ լինի, համարվի անհերքելի ճշմարտութիւն։ Ժամանակ է վերջապէս, որ մեր ժողովուրդը մտածէ իր դատն վիճակի վրա և ամբողջ գործը յանձնէ այնպիսի անձնաւորութիւնների ձեռքը, որոնք իրանց սեփական շահերը միշտ և հանապազ զոհ են բերել հասարակական շահերին, որովհետև նրանց վերցրած միասնական կարիքի է բեղմնաւոր և քաջալերութեան արժանի ճանաչել միայն այդ դէպքում»։

—

Փետրվարի 6-ին գործադրել են արել Բիբի-Հէյբաթում Զուրտլի նաւթահանքի ծառայողները և բանւորները։ Առաջադրված են մի շարք տնտեսական պահանջներ։ Գործարանի վարչութեան դրութիւնը շատ դժուար է, որովհետև ներկայումս այդ ֆիրմայի նաւթաղբերում պարբերաբար գործում են ֆոնտաններ, և գործադուլը մեծ վնասներ է հասցնում։ Բայց և այնպէս, պահանջներին առայժմ բաւարարութիւն չէ տրված։

—

Բագում, «Надежда» ընկերութեան գրասենեակի գրասենեկապետները յայտնել են գործադուլի գրասենեկապետների խորհրդին, որ նրանք հաճաձայն են իրանց գրասենեակում կատարվող երեկոյեան աշխատանքները դադրեցնել իրանց գործադուլի ընկերներին։

—

Բագուից «Закавказіе» լրագրին գրում են, որ Բագի վրաց թատրոնական ընկերութիւնը փետրվարի 18-ին բանում է իր թատրոնը։ Բացի վրացական կանոնաւոր ներկայացումներից, թատրոնը վարձով կը տրվի երեկոյթների և ներկայացումների համար։

—

Դուշէթի գաւառի Կանկի գաւառամասի բնակիչները միջնորդութիւն են յարուցել Թիֆլիսի նահանգապետի առաջ՝ թողնելու Կանկի պրիստաւ Արշ. Յարութիւնեանին։

—

Կրօնշտադ զինուորական-ծովային դատարանի զօրութիւն ստացած դատավճիռը, որի հիման վրա ծովապետ Ներօգատովը և 3 նաւապետներ դատապարտված են 10 տարվայ բերդարգելութեան, մօտ օրերս ուղարկված է Պետերբուրգի նահանգական դատարանի դատախազին կատարելու համար։ Դժուարութիւն է ծագել այն հարցի մասին, թէ որտեղ պէտք է բանտարկել Գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն զինուորականները բանտարկվում են Պետրոպաւլովսկի բերդում, իսկ Ներօգատովը զինուորական կոչումից վաղուց արդէն զրկված է։ Միւս կողմից նրան ուղարկել Վիբորգեան—«Գերեսաթ», մենաւոր բանտը—անյարմար են համարում։ Այդ մասին ցուցմունք են խնդրել բարձրագոյն իշխանութիւնից։ Ցամենայն դէպս մօտ օրերս այդ դատավճիռը կիրագործվի։ («Утро»)

—

Լօձից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Փետրվարի 2 ին Բերլինից հեռագիր է ստացվել, որը հիմք է տալիս յուսալու, որ գործարանատէրերը վերջ կը տան իրանց լոկաուտին։ Շատ հաւանական է, որ լոկաուտը կը վերջանայ փետրվարի 13 ից։ Գործարանատէրերի մութիւնը արդէն կատարված փաստ է։ Գերմանական բանկիրների աջակցութեամբ կազմվել է մի ակցիոներական ընկերութիւն 90 միլիոն մարկ դրամագլխով։ Մութիւնը առաջին քայլափոխում ոչնչացնելու է մանր գործարանների կօնկուրենցիան։

—

Ոստիկանական դեպարտամենտը հաղորդել է Պետերբուրգի քաղաքապետին, որ, ստացված տեղեկութիւնների համաձայն, վերջին ժամանակ նախընտրական ժողովներում մեծ մասամբ ճառախօսում են այնպիսի մարդիկ, որոնք իրաւունք չունեն մասնակցելու մասնակցելու։ Այդ պատճառով ոստիկանական դեպարտամենտը առաջարկում է այդպիսիներին կալանաւորել և ուղարկել պատնէշական բաժանմունքը նրանց անձնաւորութիւնը ստուգելու համար։ («Утро»)

—

«Ժողովրդական ազատութեան» կուսակցութեան Օսկվայի կօմիտէն փետրվարի 1-ի իր նիստում ձայնել է մեծամասնութեամբ, ընդդէմ երկուսի, որոշած է հրել բանւորական կուրիային ոչ մի տեղ չը տալ։ («Утро»)

—

Մոսկվայի քաղաքային վարչութիւնը ամենայն օր մեծ քանակութեամբ խնդիրներ է ստանում, որով ցանկանում են յայտնում քաղաքային վարչութեան միջոցով տեղ ու հող ստանալ Կանադայում ռուս էմիգրանտների համար աշխատանքներ և զբաղմունքներ գտնող դուխոբորների կօմիտէի օգնութեամբ, նոյնպէս և ձրի ճամակ ստանալ Կանադա գնալու համար։ Քաղաքային վարչութիւնը այդ խնդրատուներին յայտարարում է, որ Մոսկվայում, կա առաւել քաղաքային վարչութեան մէջ, կանադական դուխոբորների կօմիտէ չը կայ, այդ պատճառով անհրաժեշտ է դիմել անմիջապէս Կանադայի կօմիտէին։

—

Ներկայումս մամուլի տակ է և շուտով լոյս է տեսնելու Մոսկվայում Պետական Դումայի նախկին նախագահ Ս. Ա. Մուրոմցեվի «Պետական Դումային տուած հրանգի փորձը» գիրքը։ Գիրքը պատուիրված է 1,200 օրինակ։

—

Փետրվարի 5 և 6-ին Պետերբուրգում կայանաւորվել են 92 հոգի։

—

Կառավարչական շրջաններից եկող լուրերը հաղորդում են, որ Գուրիս-Լիդվալան գործի վերջնական վճիռը կայանալու է Պետական Դումայի դումարման օրից առաջ։ («В. В.»)

—

«Пет. Лист.» լրագիրը հաղորդում է. «Բոլորովին արժանահաւատ աղբիւրից մենք կարող ենք յայտնել, որ Գ. Ա. Սաւոլիպինի կաբինետը մնալու է նոյնիսկ Պետական Դումայի բացումից յետոյ։ Զը նայելով ընտրութիւնների, անաշող հետևանքներ տուեցին կառավարութեան համար, այնուամենայնիւ Գ. Ա. Սաւոլիպինը դարձեալ լիազօր իրաւունքներ կը վայելէ, որովհետև նրան են վերադրում Ռուսաստանի խաղաղացումը, գործադուլների բացակայութիւնը և յեղափոխութեան ճնշումը»։

—

Ընդհանուր ներումն շնորհելու մասին տարածված լուրերը վերջին ժամանակներս մի փոքր աւելի կոնկրետ ձեւն ստացել։ Մասնակի ներումն է նախատեսվում, իբրև թէ Դումայի բացման օրը։ Իրա համաձայն ներումն կը տատանվի 129 յոգ. հիման վրա մեղադրվողները, որոնց թւում և առաջին Դումայի անդամները և զրկանական յանցանքները։ Այդ ներումն չի վերաբերվում ոչ տերորիստներին և ոչ էլ «էքսպրոպրիատորներին»։ («Р. С.»)

—

Պետերբուրգի բարձր շրջաններում յամառ լուր է տարածվել, որ Սաւոլիպինի հրաժարականը մօտ օրերս կը յայտնվի։ Հաստատապէս ասում են, որ պրեմիէրի պաշտօնը առաջարկված է Կոկովցեվին, որ միաժամանակ վարելու է և ֆինանսների մինիստրի պաշտօնը։ Ասում են, թէև անկարելի է հրել տուգվել, բայց Կոկովցեվը մի օր ժամանակ է խնդրել մտածելու համար։ Սաւոլիպինի հրաժարականը և Կոկովցեվին նշանակելը վերագրում են ընտրութիւնների անաշողութեան, իսկ միւս կողմից փոխառութիւն անելու ծայրահեղ անհրաժեշտութեան։ («Новь.»)

—

Ոստիկանութեան դեպարտամենտը տեղեկութիւններ է ստացել Վոլգայեան նահանգներից տեղական գաւառների շատերի մէջ գիւղացիների և սարժտիկների մէջ պատահած ընդհարումների մասին։ Շարժումները համարվում է այն, որ գիւղացիները ձգտում են տիրանալ կալուածական ցորենի ժաբաներին։ («Рѣчь»)

—

«Рѣчь» լրագիրը հաղորդում է, որ դիպլոմատիական շրջաններում չափազանց հետաքրքրվում են ընտրութիւններով։ Դեսպանութիւնները ուշադրութեամբ հետևում են ընտրութիւնների ընթացքին և այդ նպատակով յատուկ մարդիկ են նշանակվել, որոնք և պարտաւոր են ուշադրաւ դէպքերում զեկուցումներ տալ դեսպանին կամ նրա փոխանորդին։

—

Ներկայումս ձմեռային պալատում պատրաստութիւններ են տեսնվում Պետական Դու-

մայի դումարման համար։ Պատգամաւորների ընդունելութեան հանդէսը, ինչպէս ասում են, մնում է նոյնը ինչ որ անցեալ տարի էր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

Լօնդոն, 13 փետրվարի

Իմպէրիալիստ երկիրներու մէջ պերճանք, ցուցադրանք, շռայլութիւն կարգուսարքի՝ ամենանշանակալի յատկանիշներն են ու այս չը տեսնուիր ոչ մէկ երկիր այնքան հսկայաբէն, որքան Անգլիա, ուր այսպիսի ձևականութիւններ կը հանդին մինչև ծայրայեղ աւելորդապաշտութիւն կոչվելու աստիճանին։ Ամեն պաշտօնական պարագաներու կապված են մանաւոր սէրէմօնիներ, հանդիսաւոր, ծանրակշիռ ու յոգնեցուցիչ։

Այսպիսիներէն մէկն է պարլամենտական նիստերու բացումը։ Թագաւորը պէտք է բանայ այն գահաճառով մը, որ կը բովանդակէ անտիպ ծրագիրը կառավարութեան բանելիք ուղղութեան յիշեալ նիստին, վերվիրը ակնարկ մը նետելով նաև անցեալին վրա։

Անցեալ տարի, երբ բացուեցաւ ազատական պարլամէնտի առաջին նիստը, թագաւորը միայն ներկայ էր, թագուհին սուզի մէջ ըլլալով, իսկ արքայական տան միացեալ անդամներն ալ բացակայ։ Այս տարի, թէև շաբաթէ մը ի վեր Եդուարդ VII ու Ալէքսանդրա թագուհին Պարիզ կը գտնվէին, սակայն ամսոյ 9-ին յատկապէս եկան և այսպէս բացումը տեղի ունեցաւ իրանց, Կալէսի իշխան ու իշխանուհիին և այլ մեծ ու փոքր իշխանիկներու ներկայութեան։

Լօրդերու ժողովի գահաճառը պերճօրէն զարդարված էր ու լօրդերու նստարանները, ուր նստած իրանց վերաբերութիւն չունեցող հարցեր վաւերացնել կը յաւակնին սովորական պարագաներու, այժմ զբաւված էին արիստոկրատ դասի բարձրագոյն աստիճանին պատկանող իգական սեռէն, որոնք ազատներու, գոհարաղէններու և պերճաշուք զգեստներու մէջ, ելեքտրական յորդ լոյսերուն տակ կը շողշողային այդ պահուն։

Գահին երկու կողմերը բաղված էին զանազան երկիրներու դեսպաններ, որոնց մէջ կը կը փայլէր նաև Աբդիւլ-Համիդի արժանաւոր ներկայացուցիչը։

Թագաւորը ներս մտած պահուն բոլորը ոտքի կը բարձրանան որպէս յարգանք։ Սա, գլխու խոնարհութիւնով մը կը խնդրէ նըստիլ և առնելով իշխանիկի մը ձեռքէ մագաղաթի կտորը, կը կարդայ ճառը, որ հաւիւ 12 րոպէ կը տևէ ընդամենը։

Այս ճառը ամենէն աւելի մեծափափաք ըսպասված կէտն էր, որովհետև ազատական պարլամէնտի անցեալ նիստը, թէև բազմական, շնորհիւ լօրդերու veto-ին, շատ արգասաւոր չեղաւ։ Վերջին երկու ամսվայ արձակուրդի պահուն ամենուն դիտողութեան առարկան էր լօրդերու ժողովի հարցը և երբ սբը Հէնրի Բէմպլ-Պէնրմէնն, իր հրաւիրական նամակին մէջ յիշեց բացումէն քանի մը օր առաջ հաւանական շօշափումը «ծանրակշիռ հարցերու», ատի ամեն ոք գիտէր թէ կը վերաբերէր լօրդերու ժողովին, որ տեսակ մը չինական պարիսպ է ազատական բարեփոխումներու հանդէպ։ Գահաճառը ակնարկութիւն մը ունէր այս մասին, որով յոյս կը յայտնէր որ, երկու ժողովներու մէջ տեղի ունեցած անհամաձայնութիւնները պիտի վերցվին։ «Մինիստրներս, կըսէր, այս կարևոր խնդիրը նկատողութեան ունին՝ դժուարութիւնները բառնալու դիտումով»։

Ընթերցումէն անմիջապէս յետոյ, թագաւորը կը ծալէ մագաղաթը և յանձնելով քովինին նոյն խոնարհութիւնով կառնչորդէ թագուհին դուրս և անկէ դէպի փողոց, ուր վեց կառքեր կը սպասեն. առաջին հինգը վեցական ձիերով, իսկ վերջինը, արքայակարը, 8 ձիերով և ծիծաղ ազդող համազգեստով կառավարներով, մինչ խիտ բազմութիւն մը, միշտ ու անձրևոտ օդին տակ ժամերով սպասելով թագաւորին հեռացումը լսելով, կը սկսի կոկորդալիր ողջոյններ ղրկել և մասնակցիլ ազգային երգին, որ կայսերական նուագախումբը, ձիերու վրա, կածէ։

Կեցցէներ և հուռռաներ կանչողներու մէջ կան այնպիսի դատարկապորտ անօթիներ՝ որոնք կեանքի բովանդակ ընթացքին ոչ կըրնակնին տեսած է հատ վերարկու մը և ոչ ալ ստամքնին տաք կերակուր մը, բայց իրենց այդ թշուառ վիճակը հեգնող պերճանքն ու զեղխ ցուցադրանքը կը դաստուրուի այս անօթի ու գօսացած շրթներէն այնպիսի ոգևորութեամբ մը՝ որ մարդ շուարած կը մնայ և ակամայ կը բռնադատուի զանոնք արժանի գտնել իրենց բաղդին։

Շարքով, տակաւ առ տակաւ կը պարպուին. օթօմօպիլներ, քառանիներ, զանազան տեսակի կառքեր մինը միւսին հետէն յառաջ գալով՝ կընդունին իրենց իշխանիկ տիրուհիներն ու տէրերը և կը հեռանան։ Քիչ վերջ ամեն ինչ խաղալ է վերստին։ Հասարակաց ժողովի ներկայացուցիչները, իրենց սփիքերի (Նախագահի պաշտօն ունի) առաջնորդութեամբ կիջնեն լօրդերու սրահէն վար և իրենց յատուկ նստարանները կը գրաւեն։ Իսկ լօրդերը կը մնան առանձին՝ իրենց գլխուն։

Գահաճառի պատասխանողներուն (Վարի ժողովին մէջ) անմիջապէս կը յաջորդէ պ. Պէլֆօր (պահպանողական առաջնորդ) և կը պատասխանէ կառավարութիւնը իր չափէն աւելի լօրդերով զբաղելու դիտաւորութեան վրա, կը նկատէ, որ ազատականները կը ձգտին փոխանակ իրենց (պահպանողականներու) նման «ընկերական բարենորոգումներով» զբաղելու, քաղաքական խնդիրներով ու սահմանադրական կարգերու փոփոխումներով ժամվանցառ ըլլալ։ Ասիկա բաւական ծիծաղելի նիւթ կը մատակարարէ և իրեն կը յաջողէ նախարարապետը, Սբը Հէնրի Բէմպլ-Պէնրմէն, որ պատասխանելով պ. Պէլֆօրի յարձակումներուն և հարցերուն, հոյակապ ճառով մը ցոյց կուտայ թէ ինչ բան ամենէն աւելի և առաջնապէս կը շահագրգռէ նոր պարլամենտի բ. նիստը։

Ինչպէս ակնկալելի էր, ազատականութիւնը հաճակիր չէ երբէք բացարձակապէս լօրդերու ժողովը խափանելու կարծիքներուն, բայց կուզէ, որ հաշտարար կապ մը լինի երկուքին միջև և մէկը միւսին ամբողջացուցիչ մասը հանդիսանայ։ Արդէն տրամաբանութեան հակառակ է խորհիլ, որ ազատականներ կուզեն լօրդերու վերացումը՝ քանի որ իրանք ամենէ աւելին ստեղծած են։ Այդ ծրագիրը կը փայփայէ բանւորականութիւնը և ան միայն ընդունակ պիտի ըլլայ այդ անպէտ և չարաբաստիկ ժողովը ջնջելու։

Սբը Հէնրի նոյնպէս սրամտութիւնը յայտնեց թէ ընդդիմադիր ոյժ կազմող փոքրամասնութիւնը, ջանալով հասարակաց ժողովին մէջ ժողովրդի ձայնով, նորէն կարող կըլլայ իր գաղափարները առաջ մղել և յաղթող ոյժ մը հանդիսանալ շնորհիւ լօրդերու ժողովին՝ որու վերջնական վաւերացումէն է կախված ամեն ծրագիր և սա ալ թթու պահպանողական ժողով մըն է։» Մենք,—գոչեց նախարարապետը,—երբ յաղթվինք, կը դիմենք ժողովրդին։ մեր հակառակորդները շատ հեռուն երթալու պէտք չունին, միայն գաւառին վարի ծայրը և հոն է իրանց ապաստանը։ այս ապօրինութիւնն է, որ պէտք է վերանայ մէջտեղէն և կարգադրվի։»

Ուրեմն, լօրդերու հարցը բաւական որոշ տեղ պիտի գրաւէ պարլամենտական բ. նիստը, որ կը խոստանայ խիստ լուրջ ու շահեկան նիստ մը ըլլալ։ Եւ ոչ ալ սա առանձին է։ Ուրիշ կարևոր կէտ մըն է Իռլանդիայի ինքնավարութեան հարցը՝ որ գահաճառին առաջին տեղերէն մէկը կը գրաւէր և սա ինքնին խիստ երկար ու նոյնիսկ վտանգալի վէճերու նիւթ պիտի դառնայ, քանի որ կարծիքներու բաժանումէ շատ կայ այս կէտին վրա։ Ասի թերևս կոկիկ արկիւմէնթ մը ըլլայ պահպանողականներու ձեռքը՝ ազատականներու անկարութիւնը դատափետելու։

Ցամենայն դէպս ներկայ նիստը ազատականներու յաջողութեան կամ պարտութեան հեռանկարը պիտի տայ և վճռէ անոնց ճակատագիրը։

Խիստ ծանր ու կարևոր առաջադրութիւններ պիտի ըլլան բանւորականներէ, որոնց առաջին տեղը պիտի գրաւեն 8 ժամվայ աշխատանքը և ծերերու թոշակի հարցը (old age pension). անոնցմէ և ոչ մէկուն վրա ալ ակնարկութիւն չը կայ գահաճառին մէջ և ցոյց կուտայ որ ազատականները տրամադրութիւն չունեն զբաղելու։

Ցոյս ունիմ ատիճանական այս համառօտ, նախաբան նամակէս յետոյ, քայլ առ քայլ հետաւել այս խնդրոյ և հաղորդել ինչ որ մասնաւորապէս կրնայ շահագրգռել մեր ռուսահայ ընթերցողները։

Մինաս Ցոլակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
10 փետրվարի

ՀԱԱԳԱ, 9 փետրվարի։ Պաշտօնապէս յայտարարված է, որ կառավարութիւնը պատրաստ է երկրորդ խաղաղ կօնֆերէնցիայի պատգամաւորներին ընդունել մայիսի 10-ին։

ԲՐԵՆԱՆՕԿ, 9 փետրվարի։ Բրեանսկ կայարանի պահեստատեղիների հրդեհը ոչնչացրեց 31,500 պուդ ժատակարարական հաճար. ձիւնի, ծխի և ջրի շնորհիւ, կրակը հանգցնելու ժամանակ փչացաւ մօտ 40,000 պուդ։

ՍԷՎԱՍՏՕՊՕԼ, 9 փետրվարի։ «Կիսա» առաջնակարգ հիւրանոցում կախվեց Եալտայից եկած բարոն Գրոտուսը, որը վերջին երկու օրերը փութաջանութեամբ հեռագիրներ էր փոխանակում Պետերբուրգի հետ։ Ինքնասպանութեան պատճառները յայտնի չեն։

ՄԻՆՍԿ, 9 փետրվարի։ Նովգորոդկի գաւառի Ոկանովկա գիւղում կողոպտման նպատակով կատարված է գաղանային սպանութիւն. կտրել են հրէուհի Աբրամովիչի գլուխը, մահացու վիրաւորել են նրա հօրը։ Մարդասպանները տարել են ընդամենը 4 բուբլի։ Մարդասպաններից մէկը—19 ամեայ մի պատանի—ձերբակալված է։

11 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ «Правит. Вѣстникъ»ում տպված է սենատի բացատրութիւնը, որ դատաւորները չեն կարող յարվել քաղաքական նպատակների հետամուտ կուսակցութիւններին՝ ընկերութիւններին և դաշնակցութիւններին իբրև անդամներ։ Դատաստանական հաստատութիւնների դիւանատների պաշտօնեաները, իբրև պետական ծառայութեան մէջ գտնվողներ, այնպէս է ազատ կամքով մտածողներ, դատաստանական պրիստաւները, ցրիչները, դատարանային վարչութեան համար ցուցակագրված թեկնածու անձինք, նօտարները և երդուեալ թարգմանները իրաւունք չունին հակվել ոչ միայն քաղաքական նպատակներ ակնկալող ազգային կուսակցութիւնների, ընկերակցութիւնների և դաշնակցութիւնների, որոնց մէջ մասնակցութիւն ունենալը արգելված է օրէնքով—պատժելու մտքով, այլև այնպիսիներին, որոնք իրանց ծրագիրների և իրանց գործունեութեան այլ արտայայտութիւնների մէջ երևան են հանում կառավարութեան հետ կուելու ձգտում կամ այդօրինակ կռուի են հրաւիրում ազգաբնակութեան։ Դատաստանական վարչութեան պաշտօնական անձինք բնաւ իրաւունք չունեն քննութեան ենթարկել յանցաւոր դրդումներ, բացառութեամբ այն դէպքերի, երբ այդպիսի քննութիւն կատարելը դրված է իրանց վրա օրէնքով կամ դուցէ իրանց վրա դրած է այդ պարտականութիւնը օրէնքով սահմանված կարգով։

ՍՕՖԻԱ, 10 փետրվարի։ Տեղական մակեդոնացի գաղթականների դիպլոմատիական յայտագիրը, որ ուղղված է անգլիական մինիստր-նախագահի անունով, ուղարկվեց ըստ պատկանելոյն։ Յայտագիրը ընդգծում է բոլղարների ցաւալի և վշտալի դրութիւնը Մակեդոնիայում և Անդրիապօլսի վիլայէթում, մակեդոնական բարենորոգումները անաջող է համարում, խնդրում է, որ անգլիական թագաւորը միջամտէ՝ մակեդոնական բոլղարների վիճակը բարելաւելու համար։

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ, 10 փետրվարի։ Աքսորի դատապարտվածների հիւանդանոցում, մի ռուս զինուոր դանակով սպանեց բանտարկութիւնը վերջացրած հրէայ Բաղիրվին—20 կօպէկ պ. ոսքը չը տալու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Ռուսաց Լօնդոնում նստող նախկին դեսպան բարոն Ստաալը գիշերս վախճանվեց։

ՕԴԷՍԱ, 10 փետրվարի։ Կէսօրին, Ցունաց շուկայի մօտով կառքով անցնող ոստիկանապետ ֆօն-Դեսբէրգի վրա ռումբ նետվեց, որից ոստիկանապետը թեթև վիրաւորվեց, կողքին նստած հետաքրքիր բաժնի գործակալը վիրաւորվեց ծանր կերպով, ձին սպանվեց։ Ռումբը նետվեց կառքի ետևից։ Կառքի փոքը բոլորովին ջարդ ու փշուր եղաւ։ Պայթումը սոսկալի ձայնով էր։ Ոչ ոք ձերբակալված չէ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 10 փետրվարի։ Ցունվարից սկսված գործադուլը ծիրուժկօվսկու գործարանում իր վախճանին է դիմում։ Գործարանի վարչութիւնը խոստացել է վերստին ընդունել բոլոր արձակվածներին, բացի 120 հոգուց։

ԽՐԻՍՏԻՆԻԱ, 10 փետրվարի։ Բօմատալ վի ճակում ձիւնի հիւսերից քանդվել են 4 շինական խրճիթներ, որոնցից մէկի մէջ անհետ կորել են 3, իսկ միսում—10 հոգի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Պաշտօնական։ Արդարադատութեան մինիստրութիւնը մշակել է օրէնսդրական հաստատութիւններին ներկայացնելու համար մի նախագիծ, որ վերաբերվում է ծառայութեան մէջ գտնվող յանցանքների քննութեան կարգը։ Փոփոխելուն։ Հաժանչոյ այդ նախագծի, պետական կամ հասարակական ծառայութեան մէջ գտնվող անձինք, և կամաւ ծառայութեան մտածները պաշտօնավարութեան ժամանակ կատարած յանցաւորագործութիւնների համար պատասխանատուութեան են ենթարկվում և դատվում են դատավարութեան ընդհանուր կարգով։ Զեմսկայային պետերը, Պետերբուրգի և Մոսկվայի ոստիկանութեան, քաղաքային և շինական հասարակական ինքնավարութիւնների, ստանիցիաների և շէների վարչութիւնների պաշտօնական անձինք, զեմսկայային վարչութիւնների նախագահները և անդամները կարող են ենթարկվել և կարգապահութիւնը խախտելու վերաբերվող տուգանքների—առանց դատարանի։ Քաղաքացիական վարչութեան պաշտօնական անձանց պաշտօնավարութեան ժամանակ նկատված յանցագործութիւնների քրէական գործերը վարում են նահանգական դատարանները, դատաստանական պալատները, Սենատի և քրէական բարձրագոյն դատարանի վճռաբեկ ատեանները։ Նահանգական դատարանին յանձնվում են բոլոր վարչութիւնների պաշտօնական անձինք, որոնց վերաբերեալ գործերը չեն յարակցած բարձր հաստատութիւնների վարչութեան. դատաստանական պալատին յանձնվում են այն անձինք, որոնք գրաւված ունեն 6-րդ և 5-րդ կարգի պաշտօնները, երդուեալ ժողովականները և Կայսրուհուց նշանակված կանայք։ Սենատի վճռաջինջ ատեանները քննում են 5-րդ կարգից բարձր պաշտօնեաների գործերը։ գերագոյն քրէական դատարանին յանձնվում են Պետական Խորհրդի և Պետական Դումայի անդամները—իրանց կոչման նկատմամբ կատարած պարտականութիւնների մէջ ցոյց տուած յանցանքների համար, մինիստրները, սենատորները, Նորին Մեծութեան փոխարքաները, դեսպանները և նահանգապետները։ Պաշտօնավարութեան ժամանակ ցոյց տուած յանցանքներին վերաբերվող գանգատները, և յայտարարութիւնները ուղղվում են գատախազին կամ այն իշխանութեան, որից և կախված է պաշտօն ստանալը։ Նախնական քննութիւնը տեղի է ունենում ընդհանուր կանոնների համաձայն. պաշտօնեայի և իշխանութեան մէջ—քրէական գործ սկսելու նկատմամբ ծագած տարաձայնութիւնների լուծումը վերաբերում է դատաստանական պալատի առանձին վարչութեան քննութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Ներքին գործերի մինիստրը նահանգապետներին, շրջանապետներին, քաղաքապետներին և Վարշավայի գլխաւոր ոստիկանապետին մի հրահանգ է ուղարկել, որով, ի տես ունենալով 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆէստը, վերացնում է մինչև 1903 թ-ի հոկտ. 1-ը մամուլի գլխաւոր վարչութեան մէջ գոյութիւն ունեցող այն հրատարակութիւնների այբբենական ցանկը, որոնք արգելված էին մինչև օրս հասարակական ընթերցարաններում։ Մինիստրը հնարաւոր է գտել թոյլատրել զրադարաններում և ընթերցարաններում բոլոր տպագրված հրատարակութիւնները, որպէսիսները առհասարակ չեն արգելված կայսրութեան մէջ։ Մինչև օրս արգելված գրքերի և բրօշիւրների թիւը 193 էր, իսկ պարբերական հրատարակութիւններինը—10։

Լրագիրների այն լուրերը, որ իբր փետրվարի 7 և 9-ին Ցարսկոյէ-Սէլօյում կայացած խորհրդակցութիւնները, որոնք ի շարս ընտրութիւնների հետեանքների, քննել են նաև Պետական Դումային հէնց գումարումից անմիջապէս, կամ մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ արձակելու, ներկայ մինիստրների խորհուրդը փոփոխելու կամ նրա կազմը փոխելու հարցերը, ինչպէս և քննել է այն հարցը, թէ ինչ պայմաններով կառավարութիւնը գործելու է համերաշխօրէն, հիմքից զուրկ են։

12 փետրվարի

ՀԱԱԳԱ, 11 փետր.։ 1907 թ. նոր տօմարի սեպտեմբերի 16—20 տեղի է ունենալու կաթնատնտեսութեան միջազգային կօնգրէսը։

ՆՕՎՕԶԷՐԿԱՍԿ, 11 փետր.։ Բանտապետի վրա յարձակվեցին երեք զինված անձինք, կրակեցին 5 անգամ, չը վիրաւորեցին և փախան։ Ձերբակալվեց կասկածով մէկ դպրոցական։

ՀՌՕՄ, 11 փետր.։ Հասաւ պրոֆեսոր Մարտէնսը։

ԲԵՐԼԻՆ 11 փետրվ.։ Ռէյստագի պրեզիդիումին ընդունելու ժամանակ կայսրը գոհունակութիւն յայտնեց ընտրութիւնների հետեանքների առիթով, ընտրութիւնների, որոնք ցոյց տուին, որ սոցիալ-դեմօկրատիան կարող է պարտութիւն կրել։ Կայսրը ցանկութիւն յայտնեց, որպէսզի պատգամաւորները աւելի յաճախ այցելէին գաղութները և ծանօթանային նրանց նշանակութեան հետ։

ԼՎՈՎ, 11 փետրվ.։ Երէկ յայտարարվեց, որ ըուսին ուսանողները արձակվում են բանտից, սակայն նրանք հրաժարվեցին դուրս գալ, եթէ չարձակվին բանտում մնացած իրանց 5 ընկերները։ Այսօր դատարանը որոշեց արձակել այդ 5 հոգուն էլ 300,000 կրոն գրաւականով։ Փողը տալուն պէս բոլորն էլ արձակվեցին։

ՀՌՕՄ, 11 փ.։ Ռուսաց դեսպանը ի պատիւ պրոֆէսոր Մարտէնսի նախաճաշ տուեց։ Ներկայ էին արտաքին գործերի մինիստր Տիտոնին, դեսպանները, և ռուս դեսպանատան բոլոր պաշտօնեաները։

ԻՎԱՆՕ-ՎՕԶՆԷՍԷՆՍԿ, 11 փ.։ 6 զինված անձինք յարձակվեցին խանութի վրա և կողոպտեցին մէկ բուբլի։

ԼՕԶ, 11 փետրվ.։ Երէկ կուսակցական հողի վրա կատարված ընդհարման ժամանակ սպանվեց մէկ բանւոր, երեք հոգի վիրաւորվեցին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մէջասեռ. հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահան.։
Ն. Ի. ԴԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿՆԻ-ԲԱՅԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Դ. Ե. Գուրգենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Կ. Ի. ԴԶԵԼԻԵՎ.—6½—7½ ժ.։

Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Հանախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Կ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

անվարանը առաջարկում է պատուաստած մրգերի

ծառեր եւ տունկեր

ԷԺԱՆՑՐԱՅԻ ԳՆԵՐՈՎ

Ծառացուցակները ուղարկվում են ձրի։

Հասցէն՝ Горн, Тиф. губ.
(Ե. ու.) 7—10

„ԳՈՒՏՏԵՆ ԲԵՐԳ"

գրավաճառանոց

Հարուստներ և աղքատներ—Բախ, 110 երես, Բ. տպ. գինն է 15 կօպ.։
Հաց, լոյս և ազատութիւն—Պէշեխոնով, 22 երես, գինն է 12 կօպ.։
Ժողովրդական փողերը—Ս. Ֆէօդորովի, 22 երես, գինն է 5 կօպ.։
Նոր լերան քարոզը—Կարլիլիւկ, 16 երես, գինն է 2 կօպ.։
Գորդան հանգոյցը—Միք. Յովհաննիսեանի—20 կօպ.։
Գիւղացիներին—Պրամպօլինի, 30 երես, գինն է 5 կօպ.։
Արհեստակցական միութիւններ—Ե. Թոփչեան, 104 երես, գինն է 15 կօպ.։
Ինչ է իրաւական պետութիւնը—Նովոտորժսկի, 110 երես, գինն է 15 կօպ.։
Հողային հարցը Նոր Զելանդիայում—Կարաֆով, գինն է 3 կօպ.։
Բուրժուական սեփականութիւն և նրա ապագայ զրաւումը—Ժան Ժօրէս, 36 երես, գինն է 5 կօպ.։
Դեմօկրատական ընտրութիւններ—Ա. Աբեղեանի, 71 երես, գինն է 12 կօպ.։
Ազգութիւնների հարցը Ռուսաստանում—Կարլ Կաուցկի, 16 երես, գինն է 3 կ.։
Ազատութեան ճանապարհին—Ա. Ահարոնեանի (Ղարիբ), 413 եր.,—80 կօպ.։
Սահմանադրութեան էութեան մասին—Ֆ. Լասսալ, 36 երես, գինն է 5 կ.։
Ինչպէս պէտք է լուծել հողային հարցը—Ա, Ն.—72 երես, գինն է 12 կ.։
Ինչ է ժողովրդապետութիւնը—Վ. Գօլուբեվ, 16 եր., գինն է 2 կօպ.։
Վիճագրական տեղեկագրական տեղեկութիւններ գիւղացի ազգաբնակութեան մասին—Ս. Զաւարեանի, գինն է 25 կ.։
Ժողովրդական օրէնսդրութիւնը դաշնակցական Զուրեցերիայում—Ալֆոնս Դիւնան, գինն է 20 կօպ.։
Ով ինչով է ապրում, Դիկշտէյն, 50 երես, գինն է 7 կ.։
Մի զրոյց հողի մասին, Ն. Լ.. գինն է 5 կ.։
Ագրարային ծրագրի հարցը և գիտական սոցիալիզմի տեսութիւնը.—Լ. Շիշկո, 33 երես, գինն է 7 կ.։
Կօպերացիա—Ա. Նիկոլաեվ, 59 երես, գինն է 15 կ.։

Շտապեցէք օգտվել ձեր իրաւունքից։

«Երկու ծրագիր», Լ. Պետրով թարգմ Գ. Պ., 83 երես, գինն է 20 կ.։
Պետական կազմակերպութեան հիմքերը Արևմուտքում Ս. Վշօսկի—55 երես, գինն է 12 կ.։
Գիւղացիական հարցը Ֆրանսիայում—Ս. Անռսկի—32 երես, գինն է 7 կ.։
Մարք. Յովանիսեան—«Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները» (Ծրագիր և տակտիկա)—196 երես, գինն է 50 կ.։
Ժ. Գէդ և Պ. Լաֆարգ. «Տնտեսական զարգացումը և սոցիալիզմը»—18 երես, գինն է 5 կ.։

2—2

„ՍՕՏՐՈՒԴՆԻԿ"

ՄԱՐԻԱՄ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ

Գրավաճառանոց

(Բագու, Օլգինսկայա № 9)

Ընդունում է ամեն տեսակ հրատարակութիւններ կոմիսիայով և պահեստի համար։ Պ. պ. հրատարակիչներին խնդրում ենք ծանօթանալու համար ուղարկել իրանց հրատարակութիւնները և պայմանները։

(Շ.) 7—50

Լոյս տեսաւ
Գ. ԻԲԵՎԻՉԻ
փոխադրած
Ա. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ
Թուաբանական օրինակներ եւ խնդիրներ
Գ. տարին
ԳԻՆՆ Է 25 ԿՕՊԷԿ
(Խնդիրները դասաւորված են տեսակներով)

Մամուլի տակ է
Համառօտ երկրաչափութիւն
Պատրաստ է տպագրութեան համար
Թուաբանական օրինակներ եւ խնդիրների ժողովածու
(Կոտորակների տեսութիւն և ընդհանուր կանոնները)
Դիմել Թիֆլիսի գրախանութներին կամ Тифлисъ М. Самуэляну.
(Շ. Ե.) 5—5

Սարիղամիշի

աւանի հայ հասարակութիւնը բաղկացած մօտաւորապէս 250 տնից, կարիք է զգում մի
ԵՐԿՐՈՐԴ
ՔԱՀԱՆԱՅԻ
կամ
ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒՀԻ
որ աւարտած լինի որևէ հայկական միջնակարգ դպրոց և կարողանայ նաև դասեր վերցնել տեղիս ծխական դպրոցներում։ Ցանկացողները՝ պայմանների մասին դիմելու են՝ Сарыкамишь, попечительству арм. цер. прих. школы.
1—1

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Մէհայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
70—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
Ա.ԶԳԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեմինսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Շ.) 25—100

Գիմնազիայի

I դասարանի մի աշակերտ ուսման վարձը չը կարողանալով վճարել, ստիպված է թողնել ուսումը. աղաչում է բարերարներին օգնել իրան, ով ինչքան կարող է, որպէսզի չը զրկվի ուսումից։ Նուէրները խնդրում է ուղղել «Մշակի» խմբագրութեանը։
2—3

ԾԱԽՎՈՒՄ Է
ԱՆԹՐԱՑԻՏ
60 պուդ կամ աւելի գնողները Թիֆլիսում ճանապարհի ծախս չեն վճարում։
Նոյն տեղը ծախվում է նաև ընտիր
ՁՈՐ ՓԱՅՏ
Էժան ԳՆԵՐՈՎ։ Հասցէն՝ Елизаветинская ул № 127, երկաթուղային վարչութեան կից։
(ու. շ. կ. Ե.) 2—5

Գտել եմ

մի ոսկի. Երևանի նահանգի բնակիչ ԴԱՒԻԹ ՀԱՐԱՊԵՏՕՎԻ անցագիրը № 126, և Ենիսեյի նահանգական բանտի տեսչի կողմից տրված վկայականը № 26061, որով նրան թոյլատրվում է վերադառնալ աքսորից։ Յիշեալ Հայրապետովը թող դիմէ «Մշակի» խմբագրատանը։
Ֆ.
(Կ. Ե. Հ.) 2—3

Բարձրագոյն

կրթութեամբ, մենակ հայերէնից, իսկ ռուսերէնից միջակ։ Ցանկանում եմ մի որևիցէ գործով զբաղվել։ Վճարի փոխարէն՝ ֆրանսերէնից դասեր ունենալ։
Հարցնել «Մշակի» խմբագրատանը 10—3 ժամը։
(Կ. Ե. Հ.) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զաքարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ եւ ՋՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
Տէլէֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(Ա. Օ.) 107—150

Թիֆլիսի Ժողովարան

Ուրբաթ, փետրվարի 16-ին նշանակված է պ. պ. անդամների ընդհանուր ժողով քուէարկելու այն անձանց, որոնք ժողովարանի անդամներ են առաջարկված և քննելու մի քանի անտեսական հարցեր։
(Հ. Ե. ու.) 3—3

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիֆլիսի Կենտրօնական Նպաստամատոյց Ցանձնաժողովը յայտարարում է, որ կրկին ստացված է

„ԳԵՂՈՒՆԻ"

Զուտ արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների։ Ցանկացողները ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ դահլիճի ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, թող շտապեն ուղարկել 4 ր. և ճանապարհածախքի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կօպ., «Մշակի» խմբագրատունը, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը և կամ «Ժամանակի» լրագրի խմբագրատունը։
10—10

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԸ

որպէս զարդ ժամացոյցի շղթայի կախելու համար
և որպէս բրոշ կա կանանց սեռի համար

Առանց կանխավճարի չէ ուղարկվում



Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24 В. Варданяну.

Գինն է ոսկուց 18 ռուբ. » արծաթից 3 » ճանապարհածախսով

Գինն է ոսկուց 15 ռուբ. » արծաթից 3 » ճանապարհածախսով

(Ե. ու.) 6—10



Каждая практическая хозяйка употребляетъ
ЧИСТЫЙ ГОЛЛАНДСКІЙ
КАКАО БЕНСДОРПЪ
признавая его качества.
Вы берете лишь 1/2 того количества, какое нужно взять иного какао и получаете наилучшій напитокъ.
Наша желтая обертка гарантируетъ
ЧИСТОТУ ДОБРОКАЧЕСТВЕННОСТЬ ЭКОНОМІЮ.

Ներկայացուցիչ Թիֆլիսի համար՝ Маркъ Познеръ въ Лодзи.
12, 20, 6,